Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Open Society Foundations - Armenia

ՏԵՂԵԿԱՆՔ

2013 Թ. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2014

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների՝ 2013 թվականին ՀՀ զինված ուժերում գրանցվել է 30 միջադեպ, որի հետեւանքով մահացել է 31 զինծառայող: Միջադեպերից միայն 14-ի դեպքում է ՀՀ և ԼՂՀ պաշտպանության նախարարությունը հանդիսացել է տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր, միաժամանակ մահվան 31 դեպքերից 24-ի վերաբարյալ տարածվել է պաշտոնական հաղորդագրություն:

Եթե համեմատենք նախորդ տարիների հետ, ապա մահացության դեպքերը 2013 թվականին բավականին նվազել են, սակայն տեղի ունեցած միջադեպերը, որոնց արդյունքում գրանցվել են մահվա դեպքերը՝ ոչ:

Օրինակ, 2010 թվականին գրանցվել է 31 միջադեպ, որի արդյունքում մահացել է 44 զինծառայող /ըստ պաշտոնական տվյալների՝ 54/: 2013 թ-ին գրանցվել է 30 միջադեպ, որի արդյունքում մահացել է 31 զինծառայող (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. **2010-2013թթ. ՀՀ Զինված ուժերում մահվան դեպքերի և դրանց հետևանքով մահացածների քանակը**

Տարեթիվ	Հրադադարի ռեժիմի խախտում	Անվտանգության կանոններ	Ինքնասպանություն	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Սպանություն			Դժբախտ պատահար	Առողջական խնդիրներ	Անհայտ պայմաններ	Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ	Դեպքերի Քանակը	Ընդամենը	Պաշտոնական տվյալներ
					Կանոնադրային հարաբերություններ	Դիտավորյալ/անզգուշությամբ սպանություն	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում							
2010	9	3	1	0	24	0	0	2	5	0	0	31	44	54
2011	11	3	9	0	5	1	0	6	2	1	1	36	39	36
2012	12	1	12	0	3	1	0	15	6	0	0	41	50	36
2013	5	0	8	3	2	1	1	7	4	0	0	30	31	-

2013 թ-ին գրանցված մահացության 31 դեպքերից 5-ը հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով է, 8-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 7-ը՝ դժբախտ պատահարի, 4-ը՝ առողջական խնդիրների եւ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման պատճառով, 4-ը սպանության, որոնցից 1-ը՝ դիտավորյալ, 1-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման եւ 2-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտման հետեւանքով, 3 դեպք զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանք են (տե՛ս աղյուսակ 2):

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 26 դեպքերի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, 1 քրեական գործ՝ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին, իսկ երեք գործի վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը:

Հարուցված քրեական գործերից 4-ի վարույթը հետագայում կարճվել է, 2-ի վարույթը կասեցվել է, 2 գործ ուղարկվել են դատարան, 4 քրեական գործեր գտնվում են դատաքննության փուլում, 1 գործ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին: Հարուցված քրեական գործերից 13-ը դեռևս գտնվում են նախաքննության փուլում:

Ընդ որում, վերոհիշյալ դեպքերից մեկի վերաբերյալ, ըստ պաշտոնական տեղեկատվության, ՀՀ ՊՆ քննչական ծառայության որևէ ստորաբաժանումում քննություն չի կատարվել՝ նման դեպք արձանագրված չլինելու պատճառով: Այն դեպքում, երբ լրատվամիջոցներից մեկի տարածած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ՊՆ քննչական ծառայության հասարակայնության հետ կապերի ավագ սպա Մերի Սարգսյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է, որ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:[1]

Քրեական գործերից 8-ը հարուցվել է ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը, 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ

[1] http://m.news.am/arm/news/154153.html

առաջացրել է ծանր հետեւանքներ, 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ, 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը[2], 2-ը/զինադադարի խախտման հետևանքով մահացության դեպքեր/՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, 1 գործ/զինադադարի խախտման հետևանքով մահացության դեպքով/՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով եւ 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին եի 13-րդ կետերի հատկանիշներով, 1 քրեական գործ հարուցվել է՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի եւ 112 հոդվածի 1-ին մասի հատանիշներվ՝սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, 3 գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 13-րդ կետերով, 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, 1 գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 365 հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ, 2 գործ ՀՀ քրեական օրեսնգրքի 377 հոդվածի 2-րդ մասով՝մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը: Մահվան դեպքերից մեկում քրեական գործի հոդվածը չի նշվում ո՛չ մամուլում, ո՛չ պաշտոնական աղբյուրներում

---

[2] 26.01.2013թ. կրտսեր սերժանտ Յուրի Հրայրի Գարեգինյանը մարտական դիրքում, իրեն ամրացված ինքնաձիգից կրակահերթ է արձակել նույն զորամասի զինծառայող, կրտսեր սերժանտ Արտակ Գրիգորի Գալստյանի ուղղությամբ և սպանել նրան:
Փաստի առթիվ 27.01.2013թ. հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդ. 1-ին մասով:
Նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Յու.Գարեգինյանը նշանակված լինելով մարտական դիրքում որպես դիտորդ, դիտորդի պարտականությունները սահմանված կարգի համաձայն կատարելու արդյունքում է իրեն ամրացված ինքնաձիգով կրակոց արձակել Ա.Գալստյանի ուղղությամբ:
25.06.2013թ. քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետով:

(պաշտոնական տեղեկատվությամբ՝ «Թովմաս Առաքելյանի մահվան փաստի վերաբերյալ քրեական գործը՝ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին»), (տե՛ս աղյուսակ 2):

Մահացության դեպքերից 22-ը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 9-ը՝ Լեռնային Ղարաբաղի(տե՛ս գծապատկեր 2 եւ աղյուսակ 3):

Ստորեւ ներկայացվում են մահացության դեպքերի վիճակագրական տվյալները 2013 թ-ի համար, դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը եւ դեպքերի նկարագրությունը:

2013 թ.մահացությունների պատճառը/հետեւանքը ըստ ամիսների

Աղյուսակ 2.

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Ինքնասպանություն	Սպանություն			Դժբախտ պատահար	Առողջական խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը	Դեպքերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրության առկայություն
				Դիտավորյալ	Կանոնադրային հարաբերությունների խախտմամբ	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտմամբ					
Հունվար			1	1*			1	2	5	5	5
Փետրվար	2		1						3	3	3
Մարտ		1							1	1	1
Ապրիլ			1						1	1	1
Մայիս					1		2		3	3	2
Հունիս					1		1		2	2	1
Հուլիս		1	3					1	5	5	4
Օգոստոս	1								1	1	1
Սեպտեմբեր						1	2**	1	3	4	1
Հոկտեմբեր	1	1	1				1		4	4	4
Նոյեմբեր									0	0	0
Դեկտեմբեր	1		1						2	2	1
Ընդամենը	5	3	8	1	2	1	7	4	30	31	24

* *Փաստի առթիվ 27.01.2013թ. հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր ի 104 րդ հոդ. 1 ին մասով:*
Նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Յու.Գարեգինյանը նշանակված լինելով մարտական դիրքում որպես դիտորդ, դիտորդի պարտականությունները սահմանված կարգի համաձայն կատարելու արդյունքում է իրեն ամրացված ինքնաձիգով կրակոց արձակել Ա.Գալստյանսի ուղղությամբ: 25.06.2013թ. քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետով:

** *2013թ. սեպտեմբերի 8-ին Գեղարքունիքի մարզում ավտովթարի պատճառով մահացել են 2 ժամկետային զինծառայողներ՝ Գևորգ Հովհաննիսյանն ու Ռուբեն Բաղյանը:*

Գծապատկեր 1. **Դեպքերի պատճառները**



Գծապատկեր 2. **Դեպքի տարածաշրջանը**



Մահացած զինծառայողների վերաբերյալ մանրամասն տվյալներ

Աղյուսակ 3.

#	Անուն ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան	Դեպքի վայրը (քաղաք, գյուղ...)	Զորամասը	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմինը	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1.	Արթուր Գեւորգյան	16.01.2013	ՀՀ	Վայոց Ձոր, Արփի գյուղի ճանապարհին		Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 377 հոդվածի 2-րդ մասով՝մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը	Դժբախտ պատահար /մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտում	Քրեական գործի վարույթը կարճվել է
2.	Արմենակ Մկրտչյան	17.01.2013	ՀՀ	Երեւան՝ ԿԿԶՀ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ	Առողջական /միոկարդի սուր ինֆարկտ հարցականով, թոքային զարկերակացող ունի թրոմբոէմբոլիա հարցականով, սուր սիրտ-թոքային անբավարարություն	Քրեական գործի վարույթը կարճվել է
3.	Արտյոմ Հակոբյան	18.01.2013	ՀՀ	Երեւան՝ ԿԿԶՀ	՝	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ	Առողջական վիճակ /հեմորագիկ ինսուլտ, սպոնտան մասիվ սուբարախնոիդալ	Քրեական գործով վարույթը կարճվել է

									արյունազեղում արտահայտված ուղեղի մեդիալ հատվածներում, ուղեղի այտուց, ուղեղաբնի երկրորդային համախտանիշով, վիճակ տարած ջրծաղիկից հետո/	
4.	Արտակ Գալստյան	26.01.2013	ՀՀ			Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն	Քրեական գործի վարույթը կարճվել է
5.	Վարդան Ավագյան	30.01.2013	ՀՀ		N 49971	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն

6.	Միհեր Եղշատյանը	09.02.2013	ՀՀ	Տավուշի մարզ, Մովսես գյուղ	N զորամասի մարտական հենակետում	Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:	Հրադադարի ռեժիմի խախտում /նախնական տվյալներ/	Քրեական գործի վարույթը կասեցվել է
7.	Գոռ Ղազարյան	19.02.2013	ԼՂՀ	հակամարտ զորքերի շփման գծի հյուսիս-արեւելյան ուղղությամբ տեղակայված դիրքեր		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:	Հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական գործի վարույթը կասեցվել է
8.	Կարեն Հակոբյան	21.02.2013	ԼՂՀ	Հյուսիսային ուղղությամբ տեղակայված միավորման զորամաս		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն /կանոնադրայի ն հարաբերություններ	Նախաքննություն
9.	Վոլոդյա Ավագյան	20.03.2013	ԼՂՀ	ԼՂՀ ՊԲ հյուսիսարեւելյան ուղղությամբ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 373 հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Դատաքննություն

				տեղակայված մարտական դիրք				նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ		
10.	Ռաֆֆի Մարաշլյան	19.04.2013	ԼՂՀ	ԼՂՀ ՊԲ հյուսիս-արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամաս	N 49971 «Ինտերնատ» զորամաս	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն /կանոնադրայի ն հարաբերություններ	Դատաքննություն
11.	Թովմաս Առաքելյան	02.05.2013	ՀՀ	Արարատի մարզի Եղեգնավան գյուղ		Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար	Քրեական գործը ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին

12.	Լյուքս Ստեփանյան	15.05.2013	ՀՀ	Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան		Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Սպանություն/Կանոնադրային հարաբարություններ /զինվոր-զինվոր վեճ	Դատաքննություն
13.	Արմեն Ղուդաբաշյան	17.05.2013	ՀՀ			Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ	Դժբախտ պատահար /հոսանքահարում	Նախաքննություն
14.	Սիփան Մովսիսյան	01.06.2013	ՀՀ	ք. Երեւան	Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 1-ին մասով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն/Կանոնադրային հարաբարություններ /զինվոր-զինվոր վեճ	Դատաքննություն
15.	Ալեքսանդր Ատավին	02.06.2013	ՀՀ	Շիրակի մարզ. Ք. Գյումրի	ՀՀ-ում ՌԴ Զինված ուժերի դիվիզիա	Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար/ավտովթար	Քրեական գործի հարուցումը մերժվել է

16.	Գաբրիել Լալազարյան	05.07.2013	ՀՀ		Ռազմական ոստիկանություն	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
17.	Նարեկ Հովսեփյան	22.07.2013	ԼՂՀ	ԼՂՀ, Հայկազով գյուղ	«Հայկազով» զորամաս	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 373 հոդվածի 3-րդ մասով՝զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Գործն ուղարկվել է դատարան
18.	Թադեւոս Ուղոյան/ Ուղուրյան	22.07.2013	ԼՂՀ	Ստեփանակերտի հոսպիտալ		Ոչ պաշտոնական			Առողջական/ սրտամկանի սուր ինֆարկտ/	Քրեական գործի հարուցումը մերժվել է

19.	Արման Մուրադյան	30.07.2013	ԼՂՀ	ԼՂՀ ՊԲ հյուսիս-արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքեր		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն/կանոնադրային հարաբերություններ	Նախաքննություն
20.	Մանուչար Մանուչարյան	31.07.2013	ՀՀ	Երեւան	Հատուկ նշանակման ջոկատ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն/կանոնադրային հարաբերություններ	Նախաքննություն
21.	Նորայր Պետրոսյան	23.08.2013	ՀՀ	Սյունիքի մարզ	Ազարակի զորամասի մարտական հենակետ	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 13-րդ կետերով՝ սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								մոլեռանդության շարժառիթով		
22.	Ալիկ Ջանվելյան	03.09.2013	ՀՀ	Տավուշի մարզ		Ոչ պաշտոնական			Առողջական	Քրեական գործի հարուցումը մերժվել է
23.	Գեւորգ Հովհաննիսյան	08.09.2013	ՀՀ	Գեղարքունիքի մարզ, Լճափ գյուղի խաչմերուկ		Ոչ պաշտոնական	Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժին	ՀՀ քր. օր-ի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար/ավտովթար	Գործն ուղարկվել է դատարան
24.	Ռուբեն Բաղյան	08.09.2013	ՀՀ	Գեղարքունիքի մարզ, Լճափ գյուղի խաչմերուկ		Ոչ պաշտոնական	Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժին	ՀՀ քր. օր-ի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը,	Դժբախտ պատահար/ավտովթար	Գործն ուղարկվել է դատարան

								որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ		
25.	Խաչատուր Խաչատրյան	15.09.2013	ԼՂՀ	ԼՂՀ ՊԲ հարավարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրք		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 365 հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքննություն
26.	Ժակ Գալստյան	11.10.2013	ԼՂՀ	ԼՂՀ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 377-րդ հոդ. 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը	Դժբախտ պատահար/ ավտովթար	Նախաքննություն
27.	Գևորգ Մնացականյան	16.10.2013	ՀՀ	ՀՀ հյուսիսարևելյան սահմանագոտում տեղակայված զորամասի հսկողության տարածք		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 373 հոդվածի 3-րդ մասով՝զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Ծառայության անվտանգության կանոնների խախտում	Նախաքննություն

28.	Ռուբեն Դավթյան	18.10.2013	ՀՀ	ՀՀ ՊՆ ք. Հոկտեմբերյանի զորամասերից մեկի մարտավարական դաշտ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
29.	Գարիկ Պողոսյան	22.10.2013	ՀՀ	Բերդ- Իջևան ավտոճանապարհի Պառավաքարի հատված		Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանությունը՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով և 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետերով սպանության փորձ երկու կամ ավելի անձանց նկատմամբ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
30.	Վանիչկա Հովակիմյան	10.12.2013	ՀՀ	Վայոց Ձորի մարզ, ք.Վայք	Խաչիկի զորամաս	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու	Ինքնասպանություն	Նախաքննություն

								ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը		
31.	Հրանտ Պողոսյան	15.12.2013	ՀՀ	Տավուշի մարզ, Բերդի տարածաշրջանի Մովսեսի պաշտպանական դիրքեր	Բերդի տարածաշրջանի Մովսեսի պաշտպանական դիրքեր	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 13-րդ կետերով՝ սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

2010-2013թթ. ՀՀ զինված ուժերում մահացությունների պատճառների վիճակագրությունը

Գծապատկեր. 3



2013 թ-ին ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով

1. Գոռ Ղազարյան

2013 թ-ի փետրվարի 19-ին հակամարտ զորքերի շփման գծի հյուսիս-արեւելյան ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում, հակառակորդի կողմից արձակված գնդակից մահացու վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող Գոռ Արթուրի Ղազարյանը /ծնված 1992 թվական)[3]: Գոռ Ղազարյանը զորակոչվել էր Տավուշի մարզից:

Գոռ Ղազարյանի մահվան փաստով քրեական գործ է հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:

Ըստ Տավուշի մարզի Բերդավան գյուղի գյուղապետ Արարատ Գաբրիելյանի 19-ամյա զինծառայող Գոռ Ղազարյանը Ռուսաստանից վերադարձել էր Հայաստան՝ իր պարտքը հայրենիքին տալու համար: «Ծնողներն այնտեղ են տեղեկացել կատարվածի մասին եւ իմանալուն պես եկել են: Լուրը մենք չենք հայտնել նրանց: Մենք դեռ շոկի մեջ ենք, երեխան վերադարձել էր հայրենիք ծառայության համար ու նման բան ստացվեց: Շատ քչերն են նման քայլի դիմում: Գոռը ընտանիքի միակ տղան էր»,- ասել էր գյուղապետը:

Ըստ ՀՀ զինվորական դատախազության՝ 2013 թվականի հունիսի 18-ին քրեական գործի վարույթը կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31

---

[3] http://haynews.am/hy/1361354885?fb_comment_id=fbc_485953351461865_4707398_485953928128474#f15955a8f
http://pressing.am/?p=1358&l=am
http://news.am/arm/news/142289.html

հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով (գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին):

2. Մհեր Վոլոդյայի Եղշատյան

2013 թ-ի փետրվարի 9-ին, ժամը 09.05-ի սահմաններում, ըստ նախնական տվյալների, հայ-ադրբեջանական սահմանագոտու հյուսիս-արեւելյան հատվածում, Տավուշի մարզի Մովսես գյուղի պաշտպանական դիրքերում մարտական հերթապահություն իրականացնելիս հակառակորդի կողմից որովայնի շրջանում մահացու հրազենային վիրավորում է ստացել Մհեր Վոլոդյայի Եղշատյանը /ծնված 1976թ./: Մհեր Վոլոդյայի Եղշատյանը զորակոչվել էր Բերդի զինկոմիսարիատից:[4]

Ըստ ՀՀ զինվորական դատախազության՝ պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ Մհեր Վոլոդյայի Եղշատյանի մահվան փաստի առթիվ 09.02.2013թ. ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Նախաքննությամբ հիմնավորվել է, որ Մ. Եղշատյանը սպանվել է հակառակորդի կողմից արձակված կրակոցի հետևանքով:

09.08.2013թ.-ին որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդ-ի 1-ին մասի 5-րդ կետով(գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին):

3. Նորայր Արարատի Պետրոսյան

2013թ օգոստոսի 23-ին, ժամը 11:00-ից 11:30-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի մարտական հենակետերից մեկում հրազենային մարմնական վնասվածքներով հայտնաբերվել են նույն զորամասի ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Նորայր Արարատի Պետրոսյանը եւ Արթուր Գառնիկի Ասոյանը:

Վերջիններս տեղափոխվել են Ագարակի բժշկական կենտրոն, որտեղ ստացած մարմնական վնասվածքներից Նորայր Պետրոսյանը /ծնված 1993թ./ մահացել է: [5]

---

[4] http://www.1in.am/arm/armenia_society_158017.html
http://www.aravot.am/2013/02/10/165467/
[5] http://www.mil.am/1377258446
http://www.aravot.am/2013/08/24/279527/

Քաջարանցիների պատմելով՝ Նորայրը ակտիվ, նախաձեռնող, կիրթ, լավ դաստիարակված անձնավորություն էր, միշտ հասնում էր իրեն օգնության հարցով դիմողներին, սիրված եւ ընդունված էր Քաջարան քաղաքի երիտասարդների եւ տարեցների կողմից:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդ. 2-րդ մասի 6-րդ եւ 13-րդ կետերով (սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով) հարուցվել է քրեական գործ: Ըստ ՀՀ զինվորական դատախազության տեղեկությունների ներկայումս գործը նախաքննության փուլում է:

4. Գարիկ Պողոսյան

2013 թ-ի հոկտեմբերի 22-ին, ժամը 13-14-ի սահմաններում, ՀՀ Տավուշի մարզում, Բերդ-Իջևան ավտոճանապարհի Պառավաքարի հատվածում հակառակորդը կրակ է բացել ավոճանապարհով ընթացող մեքենաների վրա: Կրակահերթից տուժել են ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական մեքենաներում եղած անձինք: Զինծառայողներին մարտական հերթապահության տեղափոխող զինվորական մեքենաների շարասյան վրա բացված կրակի հետևանքով զոհվել է ժամկետային զինծառայող, շարքային Գարիկ Արտակի Պողոսյանը, (Վանաձորի զ/կ, ծնված 1994թ., 2012թ. առաջին զորակոչ): [6]Փաստի առթիվ 22.10.2013 թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի եւ 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 13-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Նախաքննությունը շարունակվում է:

5. Հրանտ Պողոսյան

2013 թ-ի դեկտեմբերի 15-ին, ժամը 19:30-ի սահմաններում Բերդի տարածաշրջանի Մովսեսի պաշտպանական դիրքերում ադրբեջանական դիպուկահարի կրակից զոհվել է Հրանտ Պողոսյանը: Նա պայմանագրային զինծառայող էր, Բերդ քաղաքի բնակիչ:[7]

---

[6] http://newsbook.am/archives/15040
[7] http://www.slaq.am/arm/news/169483/

ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը Epress.am-ի հետ զրույցում ասել է, որ Պողոսյանը մահացել է հակառակորդի կողմից արձակած գնդակից: Համաձայն Հովհաննիսյանի՝ այլ տուժածներ չկան:[8]

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 13-րդ կետերով՝ սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:[9] Գործը գտնվում է նախաքննության փուլում:

Պետք է փաստել, որ հրադադարի ռեժիմի խախտման 5 դեպքերից միայն 3-ով է հարուցվել քրեական գործ: Մյուս երկու դեպքերով քրեական գործի վարույթը կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով (գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին):

Բ. Ինքնասպանություն/ինքնասպանության հասցնել

1. Կարեն Հակոբյան

2013 թ-ի փետրվարի 21-ին, ժամը 09:30-ի սահմաններում, հյուսիսային ուղղությամբ տեղակայված միավորման զորամասերից մեկում արտակարգ միջադեպ է տեղի ունեցել, որի արդյունքում մահացել է ժամկետային զինծառայող Կարեն Արծվիկի Հակոբյանը /ծնված 1994թ./:[10]

19-ամյա ժամկետային զինծառայող Հրազդան քաղաքի բնակիչ Կարեն Հակոբյանի մահվան փաստով քրեական գործ է հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:

---

[8] http://www.epress.am/2013/12/16/հայ-ադրբեջանական-սահմանին-զինծառայո.html
[9] http://www.armtimes.com/46712
[10] http://operativ.am/?p=8298
http://www.mamul.am/am/news/32370/%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80-%D5%A7-%D5%B4%D5%A1%D5%B0%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC#.USZt7hug5ek.facebook
http://www.ilur.am/news/view/9712.html

Ըստ ՀՀ զինվորական դատախազության՝ 25.06.2013թ. ենթասպա Էդուարդ Արմիկի Դավթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասով և որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, լեյտենանտ Սնակ Սամվելի Թովմասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի360 հոդվածի 2-րդ մասով և որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, եֆրեյտոր Վարազդատ Գնելի Կասեմյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

2. Վարդան Ալբերտի Ավագյան

2013 թ-ի հունվարի 31-ին, ժամը 22:20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի կապի վաշտի զինանոցում, ըստ նախնական տվյալների, ինքնաձիգով ինքն իրեն մահացու հրազենային վիրավորում է հասցրել նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Ալբերտի Ավագյանը /ծնված 1990 թ./: Վարդան Ավագյանը զորակոչվել էր 2012 թ-ին Նոր Նորքի զինկոմիսարիատից:[11]

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով /ինքնասպանության հասցնելը/:

Ընտանիքի անդամների բնութագրմամբ, Վարդանը զուսպ ու հավասարակշռված տղա էր, երբեք նրան արտասովոր վարքով կամ դեպրեսիայի մեջ չեն տեսել: Նա մշտապես ի վիճակի է եղել խնդիրները հարթել, իրավիճակից դուրս գալ առանց փորձանքների: Եղբայրների կանայք ասում էին, թե չեն հավատում ինքնասպանության վարկածին: Բայց այլ վարկածներ չունեին: «Շատ անհասկանալի է ամեն ինչ, մի օր առաջ զանգեց շատ ուրախ ու ոգեւորված, ասաց, որ ամսի 7-ին անպայման գալիս է, մենք շատ ուրախացանք, իրեն էինք սպասում: Ամեն ինչ էնքան լավ էր, ո՞վ կսպասեր, որ սենց կլիներ… Ուրախ-ուրախ հայտնեց, որ պատվոգիր է ստացել, ամեն ինչ շատ լավ էր, ոչ տրամադրության անկում, ոչ որեւէ բան…»,- ասում

[11] http://www.galatv.am/news/view/item_45214.html
http://operativ.am/?p=6135
http://www.mil.am/1359972027

էին ազգականները: Սիրո հողի վրա նեղվածությունն էլ բացառեցին՝ ընկերուհի չուներ:

Առողջական վիճակի առումով էլ նշեցին, թե ամիսներ առաջ ճողվածքն է վիրահատել: «Վարդանը կապի վաշտում ծառայող էր, իրեն լավ էր զգում, ոչ մի անգամ չի դժգոհել, չհասկացանք, թե ինչ եղավ, ախր դրանից մի քանի ժամ առաջ էր մեր հետ խոսել, ոչ մի ընկճվածություն չկար»:

«Գնացեք պատասխանատուներին հարցրեք, իրենք թող ասեն՝ այդ ինչպե՞ս ստացվեց, որ ուրախ, առողջ մարդը ժամեր անց կյանքին հրաժեշտ տվեց»,-լաց լինելով՝ զրույցին միջամտեց մեկ այլ ազգական:

Եվ հիմա եթե մենք գրենք, որ մեր բանակում ամենաթողություն է տիրում, որ բանակ ուղարկելը վերածվել է ռազմի ճակատ ուղարկելու, մեզ կմեղադրեն, թե՝ վարկաբեկում եք բանակը, «ջուր եք լցնում թշնամու ջրաղացին»: Մենք պնդում ենք, որ այս վիճակը հանդուրժողներն են մեր իրական թշնամիները՝ ինչ պաշտոն ուզում է նրանք զբաղեցնեն եւ ինչ տաքուկ կաբինետում ուզում է հայրենասիրական ճառեր բարբաջեն»,-գրում է թերթը:[12]

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

3. Ռաֆֆի Լեւոնի Մարաշլյան

2013 թ-ի ապրիլի 19-ին, ժամը 11.40-ի սահմաններում ԼՂՀ Պաշտպանության բանակի հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում մահացու հրազենային վիրավորում է ստացել եւ տեղում մահացել է 19-ամյա (1994թ. ծնված) Ռաֆֆի Լեւոնի Մարաշլյանը:[13]

Գործի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (ինքնասպանության հասցնել):

«Բանակն իրականում» նախաձեռնության դեպքը տեղի է ունեցել ԼՂՀ Մարտակերտի «Ինտերնատ» անունով հայտնի զորամասում: Ընտանիքին հաղորդել

[12] http://henaran.am/news_view.php?post_id=17039
[13] http://www.tert.am/am/news/2013/04/20/soldier-killed/
http://news.am/arm/news/149819.html

են, թե կատարվածը ինքնասպանություն է: Ռաֆֆին զորակոչվել էր Երեւանի Քանաքեռ-Զեյթուն տարածքային զինկոմիսարիատից: [14]

Դիազննությանը մասնակցած փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը լրագրողների հետ զրույցում նշել է, որ կրակոցը եղել է կոկորդի մասում: Եղել է մեկ կրակոց: Ըստ նրա՝ դիակի վրա բռնության հետքեր չեն եղել:[15]

Ռաֆֆի Մարաշլյանի հարեւանները պատմել են հետեւյալը. «երկու եղբայր էին, եղբայրը ասպիրանտ է, ինքն էլ ընդունվեց կիրառական, մեկ տարի հետո բանակ գնաց, որ վերադառնա եւ ուսումը շարունակի: Մի քանի շաբաթ առաջ եկել էր արձակուրդ, հարեւաններին ասել էր, որ դժգոհություն չունի բանակից, որ ընկերներով բարձրանում են սահման, իջնում»:

«Շատ համեստ եւ խելացի տղա էր, ոչ մեկի վրա ձայն բարձրացրած չկա, ձայնը լսած չկանք, շոկի մեջ ենք, մեր աչքի դեմը մեծացած, մեր Զեյթունում դպրոց գնացած խելացի երեխա էր Ռաֆոն», պատմել է հարեւաններից մեկը՝ հավելելով, որ հնարավոր չէր էդ տեսակ երեխան իրեն խփեր: Նրանք ասացին, որ ամբողջ Զեյթունցը ցնցված է:

«Մեծացնես երեխուն, այդ տարիքին հասցնես ուղարկես բանակ, որ դի՞ն տան քեզ», ասել է հարեւաններից մեկը՝ ավելացնելով, որ սա է մեր հայոց բանակը:[16]

Զորամասի հրամանատարի բանավոր պատմածի համաձայն՝ այդ օրը նշված սահմանային գոտում տեղի էր ունենում հերթափոխ, եւ մի գումարտակի զինծառայողներին փոխարինում էին մեկ այլ գումարտակի զինծառայողներ, ինչի նպատակով հենակետին էր մոտեցել զինվորական ավտոբուսը:

Ըստ հրամանատարի՝ հերթափոխն ավարտած զինվորները միմյանցից 40մ հեռավորության վրա մեկ առ մեկ շարժվում էին դեպի ավտոբուսը: Այդ ժամանակ էլ հնչել է կրակոցի ձայնը, զինվորները վազելով մոտեցել են եւ տեսել ինքնասպան եղած Ռաֆֆիին:[17]

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի (ինքնասպանության հասցնել) հատկանիշներով, բայց նախաքննության ընթացքում վաշտի

---

[14] http://news.am/arm/news/149819.html
[15] http://www.galatv.am/news/view/item_695584.html
http://168.am/2013/04/22/213620.html
[16] http://lragir.am/index.php/arm/0/right/view/81867
[17] http://www.epress.am/2013/04/25/«Հրամանատարը-սուտ-հեքիաթ-է-պատմել»-փո.html

հրամանատար, կապիտան Զ. Նազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաեւ իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով: Որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Կապիտան Զ.Նազարյանը 2013թ ապրիլի 29-ին կալանավորվել է երկամսյա ժամկետով:[18] Իսկ զորամասի հրամանատար Սմբատ Գրիգորյանի միայն պաշտոնն է փոխվել որպես պատիժ:[19]

14.10.2013թ. քրեական գործը ՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է, դատարան:

Քրեական գործով դատաքննությունը շարունակվում է:

4. Գաբրիել Աբրիկի Լալազարյան

2013 թ-ի հուլիսի 5-ին, ժամը 22:10-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի տարածքում գտնվող հեռախոսային ալեհավաքի աշտարակից սավանով կախված վիճակում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, 1994 թ-ին ծնված շարքային Գաբրիել Աբրիկի Լալազարյանի դին[20]:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդ. 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը) հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն:

Գաբրիելը բանակ էր զորակոչվել Սիսիանի զինկոմիսարիատից՝ 2012թ. աշնանային զորակոչին: Զինվորի հարազատների փոխանցմամբ նրա ծնողները բնակվում են Մոսկվայում: Գաբրիելը ծառայել է Արմավիրի զորամասում, որտեղից գործուղվել էր ռազմական ոստիկանություն: Ըստ որոշ աղբյուրների Գաբրիելը հոգեկան խնդիրներ է ունեցել. Արմավիրում ծառայելու ժամանակ նա մեկ անգամ

---

[18] http://haynews.am/hy/1368459619
[19] http://www.aravot.am/2013/09/13/385300/
[20] http://haynews.am/hy/1373096500
http://www.aravot.am/tag/%D5%A3%D5%A1%D5%A2%D6%80%D5%AB%D5%A5%D5%AC-%D5%A1%D5%A2%D6%80%D5%AB%D5%AF%D5%AB-%D5%AC%D5%A1%D5%AC%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/

փորձել է ինքնասպան լինել՝ սայրով կտրելով երակները: Այդ դեպքից հետո նա համապատասխան բուժում է ստացել զինվորական հոսպիտալում եւ Կանազի հոգեբուժարանում, ապա կրկին վերադարձել ծառայության:[21]

Գաբրիելի քեռին՝ Արայիկը, NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում կարծիք է հայտնել, որ մահվան փաստով, թեեւ ինքնասպանության հոդվածով է քրեական գործ հարուցվել, բայց պետք է խնդրի հաջորդ երեսն էլ ուսումնասիրվի:

Ըստ Գաբրիելի քեռու տղայի՝ Կանազի հոգեբուժարանում մահվանից առաջ պառկած լինելու պատճառները իրենց համար անհասկանալի են: Այդ հանգամանքով առանձին քննություն են վարում: Նա հավաստիացրել է, որ Գաբրիելը մինչեւ բանակ գնալը ոչ մի հոգեկան խնդիր չի ունեցել:

Շաղատ գյուղի գյուղապետ Տիգրան Խաչատրյանի խոսքերով Գաբրիելը մոտ 7 տարի առաջ ծնողների եւ 3 եղբայրների հետ գյուղից մեկնել էր Ռուսաստան բնակության, սակայն ամիսներ առաջ վերադարձել էր ծառայության անցնելու: Գաբրիելից առաջ մեծ եղբայրն է եկել ծառայել եւ գնացել, իսկ փոքր եղբայրը մեկ տարի հետո պետք է ծառայության գար: Գյուղապետի խոսքով՝ Գաբրիելը բնավորությամբ շատ հանգիստ, անշառ, լավ երիտասարդ է եղել: Նա Ռուսաստանում շինարարությամբ է զբաղվել:[22]

Շաղատի գյուղապետարանի աշխատակազմի ղեկավար Հովհաննես Արզումանյանը նշել է, որ Գաբրիելը իրենց աչքի առաջ մեծացած երեխա էր, որեւէ հոգեկան խնդիր չի ունեցել, ինչպես փորձում են տարածել: Նա շատ հավասարակշռված, խելոք անձնավորություն էր. «Նույնիսկ շատ խելացի էր, այսօր այդքան խելացի չպետք է լինել»,- ասաց նա: Հ. Արզումանյանը պնդեց, որ սավանով կախվելու տարբերակ չի կարող լինել, քանի որ Գաբրիելի մարմինը նայել են, կախվելու որեւէ հետք չի եղել, փոխարենը կրծքավանդակի շրջանում կապտուկներ են եղել, ծնոտից ներքեւ պարանոցի մոտ ճոպանը կարծես ձգած լինեն: «Իմ անձնական կարծիքն է՝ ինչպե՞ս պետք է սավանով ինքն իրեն կախի, սավանով եթե փաթաթեն մի տասը սմ տրամագծով, այսինքն՝ մի չորս դյույմի հաստություն է դառնում, ինչպե՞ս է սա հնարավոր»,- ասաց Հովհաննես Արզումանյանը:[23]

---

[21] http://168.am/2013/07/06/247352.html
[22] http://news.am/arm/news/161418.html
[23] http://www.1in.am/arm/armenia_society_197678.html

2013 թ-ի հուլիսի 10-ին ՀՀ պաշտպանության նախարարը ընդունել է Գաբրիել Լալազարյանի ծնողներին՝ Աբրիկ Միսակի Լալազարյանին եւ Անահիտ Բագրատի Հայրապետյանին: Պաշտպանության նախարարն իր ցավակցական խոսքն է հայտնել մահացած զինվորի ծնողներին եւ հավաստիացրել, որ ՊՆ քննչական ծառայության եւ ռազմական ոստիկանության կողմից ձեռնարկվում են օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ՝ դեպքի հանգամանքները պարզելու, բազմակողմանի եւ լրիվ քննությամբ օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու համար: Ա. Լալազարյանը եւ Ա. Հայրապետյանը հայտնել են, որ վստահում են պաշտպանության նախարարին, ինչպես նաեւ ՊՆ իրավապահ մարմիններին եւ իրենք եւս կաջակցեն նախաքննությանը: [24]

Ըստ ՀՀ զինվորական դատախազության տեղեկատվության՝ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

5. Արման Հովսեփի Մուրադյան

Հուլիսի 30-ին հյուսիս-արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքերից մեկում, նախնական տվյալներով, հրազենային մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 1993թ. ծնված Արման Հովսեփի Մուրադյանը:[25]

NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում Արագածոտնի մարզ Ցամաքասար գյուղի գյուղապետ Գոռ Գրիգորյանն ասել է, որ Արման Մուրադյանը 3 ամիս հետո պետք է տուն վերադառնար: Գյուղապետի խասքերով տղայի հայրը գյուղի իրենց տունն ու հողերը վաճառելուց հետո մեկնել էր Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի, իսկ մայրը մահացածի փոքր եղբոր հետ ապրում է Էջմիածնում՝ հարազատների տանը:

Հարցին, թե ճանաչելով Արմանին ի՞նչ է կարծում, նա ինքնասպանության կգնա՞ր, գյուղապետը պատասխանեց. «Շատ խելոք ընտանիքի երեխա էր: Ինքը շատ խեղճ ծառայող էր, չէր համարվում: Մեր աչքի դեմը մեծացած երեխա էր, շատ խելոք, շնորհքով ընտանիք էր: Մի անգամ էլ դեպք եղավ, երբ ծառայությունից փախավ էլի

[24] http://168.am/2013/07/11/248505.html
[25] http://razm.info/16676

հետ տարանք: Ծառայության հետ չէր հարմարվում: Սերժանտ էլ է եղել, թե ինչի պետք է այդպիսի քայլի գնար, չեմ հասկանում»,- պատմեց գյուղապետը:[26]

Արման Մուրադյանի հայրը՝ Հովսեփ Մուրադյանը, «Ժողովուրդ»–ի հետ զրույցում հավաստի տեղեկություններ է հաղորդել, որ իր որդին խնդիր է ունեցել ԼՂՀ N զորամասի գնդի հրամանատար Էմիլ Ավետիսյանի զինծառայող հարազատներից մեկի հետ. «Ինձ համար տարօրինակն այն է, որ այդ Էմիլ Ավետիսյանն այդ դիրքերում, որտեղ իմ տղան է եղել, երբեք հերթապահ չի եղել, ու ես չեմ բացառում, որ նա այդ դիրքեր գնացել է վրեժ լուծելու համար: Ո՞նց կարող էր 20 ամիս ծառայած զինվորը գնալ ինքնասպանության, դա բացառված է: Գիտե՞ք, թե այդ Էմիլ Ավետիսյանն էրեխեքին ինչքան է խոշտանգել, վազեցնել է տվել ու լիքը շատ այլ բաներ: Ինչ ցուցմունք էլ տան նրա զորամասի ընկերները, ես չեմ հավատա, քանի որ այդ տղաներին այնքան ահ կտան՝ ասելով՝ եթե այն, ինչ ասենք, չգրեք, մենք ձեզ հետ հաշվեհարդար կտեսնենք, ու կարող է պատահել՝ Արմանի օրն ընկնեք: Ոչ թե իմ տղան է իր զենքով կրակել իրեն, այլ Ավետիսյանն է կրակել, եւ ես արդարություն եմ պահանջելու ու պայքարելու եմ արդարության համար»,– ասել է զինվորի հայրը:[27]

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ 05.08.2013թ. մայոր Էմիլ Զավենի Ավետիսյանին ՀՀ 358.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 358.1 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 358.1 հոդվածի 2-րդ մասով, 375-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

---

[26] http://news.am/arm/news/165021.html
[27] http://operativ.am/?p=31397

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործողությունները դեպքի առթիվ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել են որոշ մանրամասներ եւս. Մասնավորապես՝ 2011թ. նոյեմբերի 28-ին Թալինի զինկոմիսարիատից Լուսակերտի ուսումնական գումարտակ զորակոչված Արմանը 6 ամիս Լուսակերտում ծառայելուց հետո եւ 2012թ. մայիսին ստանալով կրտսեր սերժանտի կոչում, 2012թ. մայիսի 12-ի տեղափոխվել է Ասկերան, որտեղ 1 օր մնալուց հետո տեղափոխվել է Մարտակերտի N49971 «Ինտերնատ» զորամաս՝ հակատանկային գումարտակ: Ծնողների խոսքերով Արմանը գերազանց սովորել է Արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման ակադեմիայում: Երկրորդ կուրսն ավարտելով՝ մեկնել է ծառայության:

Հ. Մուրադյանի խասքերով. «Գնդակը կպել է միայն թոքին: Թոքի մեջ ամբողջովին արյուն էր լցված: Արմանը մահացել է ներքին արյունահոսությունից»: Շրջանային դիահերձարանում դատական բժիշկն Արմանի հարազատներին ասել է, որ եթե ժամանակին հասցնեին բուժկետ, Արմանի կյանքը հնարավոր կլիներ փրկել, քանի որ սիրտը վնասված չի եղել:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահը ներգրավվել է գործում որպես տուժողի իավահաջորդի ներկայացուցիչ:

6. Մանուչար Մերուժանի Մանուչարյան

ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկություն է տարածել, որ հուլիսի 31-ին, ժամը 13:20-ի սահմաններում N զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Մանուչար Մերուժանի Մանուչարյանը /ծնված 1993 թ./ գտնվելով պահակակետի դիտաշտարակում, ըստ նախնական տվյալների, իրեն ամրակցված ԱԿՍ-74 տիպի ինքնաձիգից ինքն իրեն հասցրել է մահացու հրազենային վիրավորում:[28]

ՊՆ քննչական ծառայությունում փաստի առթիվ 2013թ-ի հուլիսի 31-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդ. 1-ին մասով

[28] http://www.lragir.am/index/arm/0/country/view/86285
http://www.mil.am/1375301842

(ինքնասպանության հասցնելը): Ըստ պաշտոնական տվյալների՝ քրեական գործքի նախաքննության ընթացքում 04.10.2013 թ. Բաբկեն Գրիգորի Գաբոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով:

29.10.2013թ. Լեոնիդ Սեդրակի Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 182-րդ հոդվածի 1-ին մասով:

29.10.2013թ. Արման Արթուրիկի Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 358.4-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննությունը շարունակվում է:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործողությունները դեպքի առթիվ

Մանուչար Մանուչարյանի բնակարանում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները փորձել են պարզել դեպքի մանրամասները:

Ըստ Մանուչարի մոր խոսքերի՝ իրեն հայտնել են, որ որդին իբր եղել է «աղանդավորական» շարժման անդամ, որի պատճառով ինքնասպանություն է գործել: Սակայն մայրը ժխտում է նման տեղեկատվությունը՝ պնդելով, որ իր որդին Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ էր եւ նույնիսկ եկեղեցի գնացել է ոչ այնքան հաճախակի, եւ բացի այդ բավականին զբաղված է եղել:

Հարազատները հայտնել են, որ, իրենք տեղեկություն են ստացել, թե իբր դիակի մոտ հայտնաբերվել է ինչ-որ այրված թուղթ, որը վերստին կապվել է աղանդավորական երեւույթների հետ:

Մոր ասելով՝ իրենց ընտանիքը բազմաթիվ փորձությունների եւ խնդիրների միջով են անցել, եւ վերջերս են խնդիրները լուծվել, եւ հնարավոր չէր, որ այդ ամենը հաղթահարելուց հետո իր որդին դիմեր այդ քայլին:

Նա որդուն նկարագրել է որպես կյանքով լեցուն, ընկերների շրջապատում հարգանք վայելող եւ սիրված անձնավորություն:[29]

Նրանց ընտանիքում 3 երեխա են, Մանուչարն ունի իրենից մեծ եղբայր եւ իրենից փոքր քույր: Նրա ծնողներն ամուսնալուծված են, երեխաներն ապրում են մոր հետ: Քանի որ ընտանիքը գտնվել է սոցիալապես անապահով վիճակում, տղան աշխատել է 15 տարեկանից, որպեսզի հոգ տանի ընտանիքի համար:

[29] http://hayeli.am/article/341596/

7. Ռուբեն Դավթյան

2013թ-ի հոկտեմբերի 18-ին, ժամը 13:30-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի մարտավարական դաշտում ժամկետային զինծառայող, շարքային Ռուբեն Էդուարդի Դավթյանը, ըստ նախնական տվյալների, իրեն ամրակցված ինքնաձիգից ինքն իրեն հասցրել է հրազենային վիրավորում:[30]

Հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին վերջինս մահացել է: Փաստի առթիվ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդ. 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը) ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

ԳԱԼԱ-ն փորձել է տեղեկություն ճշտել, թե՞ կան արդյոք կասկածյալներ կամ մարդկանց շրջանակ, ովքեր կասկածվում են կապանցի զինծառայողին ինքնասպանություն հասցնելու մեջ: ՀՀ ՊՆ քննչական վարչության հասարակայնության հետ կապերի սպա Մերի Սարգսյանը ասել է, որ դեռ այս գործով կասկածվող անձինք չկան եւ ոչ էլ նման շրջանակ կա:

ԳԱԼԱ-ն զրուցել է նաեւ Կապան քաղաքի «Հունան» համատիրության նախագահ Էլմիրա Գրիգորյանի հետ, ով պատմել է, որ արդեն 18 տարի բնակվում է մահացած զինծառայողի հարեւանությամբ եւ լավ է ճանաչում վերջինիս ընտանիքին ու երաժիշտ ծնողներին: Նա նաեւ ասել է, որ Կապանում դժվարանում են հավատալ, որ Ռուբենը ինքնասպան է եղել:

«Իմ դրկիցն են, ես 18 տարի համատիրության աշխատող եմ, հիանալի մարդիկ են, մայրը երաժշտական կոնսերվատորիա է ավարտել, հայրը եւս: Հիմա հայրը Մոսկվայում է գտնվում, քանի որ երեք երեխաներն էլ խելացի են եւ ուսանում են Երեւանում, հայրը գնացել է Ռուսաստան, որպեսզի կարողանային ուսման վարձավճարները փակել:

Երեք երեխաներն էլ կրթության ծարավ են, խելացի երեխաներ ունեն:

Ռուբենը փոքրն է: Նրա մորը եւ մորական կողմին ավելի լավ գիտեմ. մայրը իմ համադասարանցին է եղել: Մորական կողմը բոլորը ինժեներ եւ բժիշկներ էին: Մայրը Կապանի երաժշտական ուսումնարանում դասավանդում էր, ինքնակամ դուրս եկավ

---

[30] http://www.mil.am/1382099023

ու զանց Երեւան՝ ուսանող երեխաներին պահելու: Բոլորը Կապանում ցավում են այս դեպքի կապակցությամբ, նաեւ զարմացած են»,-ասաց Էլմիրա Գրիգորյանը:[31]

8. Վանիչկա Հովակիմյան

2013 թ-ի դեկտեմբերի 10-ին, ժամը 18:10-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի տարածքում հայտնաբերվել է ներքին վերակարգում որպես օրապահ ընդգրկված ժամկետային զինծառայող, շարքային Վանիչկա Արամայիսի Հովակիմյանի դին՝ ծնոտի ստորին շրջանում հրազենային վիրավորումով:[32]

Ինչպես տեղեկացնում է ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը, փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:[33]

Ըստ NEWS.am-ի տեղեկատվության՝ շարքային Վանիչկա Արամայիսի Հովակիմյանը դեկտեմբերի 10-ի երեկոյան զանգել է հորն ու ասել, որ իրեն այլևս չեն տեսնելու ու անջատել է հեռախոսը: Չինարիում խոսում են, որ հայրն արագ հետ է զանգել, սակայն որդին արդեն մահացած է եղել:

Երկու տարի առաջ ականի պատճառով ոտքը կորցրած հայրը՝ Արամայիսը շարունակում է աշխատել ու պահել ընտանիքին: Չինարիի բնակիչների NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասացին, որ բոլորը ցնցված են, չեն հավատում, որ Վանիչկայի նման խելացի ու գրագետ երեխան կարող է այդ քայլին դիմել: Գյուղում խոսակցություններ կան, որ Վանիչկան ինքնասպանությունից առաջ գրություն է թողել, որի բովանդակությունը ոչ ոք չգիտի:[34]

Վանիչկա Հովակիմյանի մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում ավելի վաղ ձերբակալված երկու զինծառայողներ են կալանավորել: Այդ մասին Epress.am-ի հետ զրույցում ասել է ՊՆ քննչական ծառայության ավագ սպա Մերի Սարգսյանը: Ըստ քննության վարկածի՝ զինծառայողին ինքնասպանության են հասցրել:

---

[31] http://www.galatv.am/news/view/kapan-zinvor.html
[32] http://lurer.com/?p=124328&l=am
[33] http://www.tert.am/am/news/2013/12/11/Consript-death/
http://news.am/arm/news/184853.html
[34] http://news.am/arm/news/184923.html

«19-ամյա Շմավոն Կյուրեղյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասի (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում՝ զենք կամ առողջությանը վնաս պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով) և 182-րդ հոդվածի 1-ին մասի (շորթում) հատկանիշներով, իսկ 20-ամյա Պարույր Մկրտչյանին՝ 359-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով: Երկու զինծառայողների նկատմամբ էլ խափանման միջոց է ընտրվել երկամյա կալանքը», – նշել է Սարգսյանը:[35]

Արդեն 2014 թ-ի հունվարին Վանիչկա Հովակիմյանի մահվան փաստով հարուցված քրեական գործի շրջանակներում կալանավորվել է նաև երրորդ անձը՝ կապիտան Արման Աթաբեկի Մուրադյանը:[36]

Ա. Մուրադյանի նկատմամբ մեղադրանքն առաջադրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասի (Պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաեւ իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, եւ եթե դրանք էական վնաս են պատճառել՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով) հատկանիշներով:

Պետք է փաստել, որ մահվան դեպքերի թվում զգալի մասը կազմում են ինքնասպանությունները: Ի դեպ, արձանագրված 8 դեպքերից միայն մեկն է գտնվում դատաքննության փուլում, մյուս բոլոր գործերով դեռեւս շարունակվում է նախաքննությունը:

---

[35] http://www.epress.am/2013/12/16/զինվորի-մահվան-գործով-2-մարդ-է-կալանավոր.html
[36] http://aysor.am/am/news/2013/12/21/vanichka-hovakimyan-court/

Գ. Սպանություն

Կանոնադրային հարաբերությունների խախտման հետեւանքով

1. Լյուքս Ստեփանյան

2013 թ-ի մայիսի 15-ին Նոյեմբերյանի տարածաշրջանում տեղակայված զորամասում արտակարգ միջադեպ է տեղի ունեցել: Ժամկետային զինծառայողներից մեկը զորամասի ծխարանում կրակ է բացել: Դրա հետեւանքով ժամկետային զինծառայող, Մարտունու շրջանի Վերին Գետաշեն գյուղի բնակիչ, 1994թ. ծնված Լյուքս Ստեփանյանը զոհվել է:[37]

Այդ կրակոցներից ծանր վիրավորվել է ժամկետային զինծառայող, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղի բնակիչ, 1994թ. ծնված Հրաչյա Սարգսյանը: Վերջինս ժամը 16-ի սահմաններում գլխի հրազենային վնասվածքով տեղափոխվել է Նոյեմբերյանի բժշկական կենտրոն, որտեղից էլ ժամը 20-ին՝ Երեւանի զինվորական հոսպիտալ:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ քր. օր.-ի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով) հարուցվել է քրեական գործ: Դավիթ Խաչատրյանը ձերբակալվել է:

22.11.2013թ-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Քրեական գործը գտնվում է դատաքննության փուլում:

Ըստ առկա տեղեկությունների՝ Դավիթ Խաչատրյանը վիճաբանել է Լյուքս Ստեփանյանի հետ, որի ժամանակ կրակել է վերջինիս վրա:[38]

Որպես բողոքի նշան մայիսի 18-ին Լյուքս Ստեփանյանի հայրը, որոշել է ի նշան որդու հետ կատարվածի դեմ բողոքի՝ որդու դին բերել Երեւան եւ բողոքի միջոցառում անցկացնել Կառավարության շենքի դիմաց:

Դեպքի հետ կապված՝ ՊՆ փակել է ճանապարհը՝ թույլ չտալով սպանված զինվոր Լյուքս Ստեփանյանի հարազատներին շարունակել իրենց ճանապարհը Երեւան:

---

[37] http://operativ.am/?p=17470
[38] http://news.am/arm/news/153708.html

Սպանված զինվոր Լյուքս Ստեփանյանի հարազատները, չնայած ստեղծված խոչընդոտներին, փորձել են շարունակել ճանապարհը դեպի Երեւան եւ արդեն հասել են Սեւանի պետավտոտեսչություն:

News.am-ի տեղեկություններով՝ խոչընդոտներ են ստեղծվել նաեւ Երեւան-Սեւան մայրուղում. բախվել են ոստիկաններն ու սպանված զինվոր Լյուքս Ստեփանյանի հարազատները, ովքեր որդու դին տեղափոխում են Երեւան: Ըստ աղբյուրի՝ նրանց միջեւ ծեծկռտուք է սկսվել: Զինվորի հարազատները զինվորականների մեքենաների պատնեշը հաղթահարելու համար ջարդել են նրանց մեքենաները: Աղբյուրի փոխանցմամբ՝ հաջողվել է հաղթահարել պատնեշն ու շարունակել ճանապարհը: Հայտնում են նաեւ, որ Երեւանից նրանց հետ հանդիպման են գնացել նորանոր ՃՈ եւ զինվորական մեքենաներ, որպեսզի կանխեն սպանված զինվորի հարազատների մուտքը Երեւան:

Զոհվածի հայրն ասել է, որ իր այդ քայլի նպատակը որդու սպանության բացահայտումն է: «Ես ոչ մի տեղեկություն չունեմ իմ էրեխու հետ ինչ ա պատահել, ոչ մեկը չի ասում, ինձ շատ տարբեր բաներ են ասում, «չաստում» ինձ մի բան են պատմել, Ճանապարհին՝ ուրիշ բան, գյուղում՝ ուրիշ բան», հայտնում է Tert.am-ը:[39]

Զոհվածի մայրը ողբում էր. «Զարկե՞լ էր՝ թող ոտքին զարկեր, ինվալիդ սարքեր, բա ես հիմի ո՞նց մխիթարվեմ: Զարկե՞լ էր, թող թուրքը զարկեր, կասեի տղես հերոսի մահով մեռավ, բա ես հիմի ո՞նց մխիթարվեմ»:

Գյուղացիները՝ հիմնականում տարեց մարդիկ ու կանայք, վրդովված էին: Նրանց խոսքով, խաղաղ պայմաններում գյուղից այս էլ վեցերորդ զինվորն է մահանում:

«Ինչի՞ համար են էս զինվորին տանում թաղելու: Հանուն ինչի՞, ախր պատերազմ չի… բա էդ զորամասում հրամանատար չկա՞: Հարց եմ տալիս, Սերժ Սարգսյան, ինչի՞ համար սպանեցին: Ինչի՞ դու սաղ մնաս, էսա երեխեն գնա հողի տակը», - գոռում էր մի գյուղացի:

Բարձրաստիճան զինվորականներին ու նրանց մեքենաների շարասյունը տեսնելով՝ կանայք բորբոքվեցին.

[39] http://jfhr.am/?ln=1&id_=10&page_id=62

«Ինչի՞ համար ա էս պետությունը, մենակ փող հավաքելո՞ւ… 18 տարի երեխուն պահել էր արդար քրտինքով, որ էսօր տաներ հողի մե՞ջ դներ: «Ինչի՞ մի օր չլսեցինք, որ պաշտոնավորի երեխեն սահմանին ծառայի, սենց մե բան էղնի: Մենակ հող փորողի, անասուն պահողի երեխեն կզոհվի», «Թուրքի գյուղա՞ էր, հորի՞ պտի հայու գյուղից հայը մեռնի», «Ախպերս Ղարաբաղ կռիվ է էրէ, հաղթեր է, մկա Ռուսաստանա քուչեքը կֆոֆռա, էսա մեծավորներ էլ զվանին դրել են թեւերուն, կապրին, մեր էրեխեքին էլ կտանեն, սպանեն»:

Անգամ գյուղի զինկոմ Գագիկ Հարությունյանն իր վրդովմունքը չէր թաքցնում:

«Ամեն զորակոչի գալիս եմ գյուղից տղաներին հավաքում տանում եմ… 18 տարին լրանում է, ուղարկում ենք մեր հայոց սահմանները պաշտպանելու, բայց արդյունքը չենք ստանում, արդյունքը, խնդրեմ, մեր առաջն է, որ չգիտենք՝ ինչ անենք», - մեզ հետ զրույցում ասաց Հարությունյանը:

«Երեք տղա երեխա էլ ես ունեմ: Մեծն աշունը բանակի է: Նոր զինկոմին ասել եմ՝ հետեւից չգաս… Աստված չանի, պատերազմ սկսի, երեքին էլ ուղարկեմ, բայց սենց… թող գան ինձ տանեն դատեն, երեխեքին դատեն… ավելի լավ ա բանտ նստեն, քան թե էսպես լինի», - ասաց գյուղացիներից մեկը:

Մի ուրիշ գյուղացի էլ զորակոչի տարիքի երեք տղա ունի. «Իմ էրեխեքն արդեն բանակի են՝ երկուսը ջեւիկ (զույգեր) են, մեկը թաք ա: Ես մի ճանապարհ պիտի ստեղծիմ, օր էրեխեքին բանակից պոկեմ», - ասաց նա: «Ճանապարհն ո՞րն ա, տանես պաշտոնավորին 10 հազար դոլար տաս հարստացնե՞ս, - առարկեց նրա համագյուղացին, - ինչի՞ պետք է էս վիճակի մեջ լինենք, որ հազիվ աշխատած մի երկու կոպեկ փողը տանենք կառավարության գրպանը լցնենք, ինչ ա, թե չտանեն մեր

երեխուն սպանեն»:[40]

Սպանված ժամկետային զինծառայող, շարքային 19-ամյա Լյուքս Ստեփանյանի

հայրը՝ պատմում է, որ որդու հոգեհանգստի ժամանակ իրենց տուն են եկել պաշտպանության նախարարության աշխատակիցները, հրամանատարական կազմը, որոնց իրենք հարցրել են, թե ինչ կարող են ասել որդու մասին, դեպքի մասին, բայց որեւէ պատասխան չեն ստացել:

[40] http://ilur.am/news/view/13672.html

«Հրամանատարը եւ մյուսները՝ վեց-յոթ հոգի, նրանց բոլորին խնդրեցինք՝ ես, կինս, որդիս, մեկ բան ասացե՛ք տղայիցս, նրանք որեւէ բան չասացին մեր տղայի մասին»,- ասաց հայրը՝ հավելելով, որ նրանց իրենց տնից վռնդել են:
Այնուհետեւ հայրն իմացել է, որ հորեղբոր տղայի մոտ 300.000 դրամ գումար են թողել եւ անմիջապես փողը հետ է վերադարձրել: «Հա՞ց էիք ուզում ուտել, գնացե՛ք ռեստորան, հաց կերե՛ք, ես միլիոնների քյասիբ եմ, բայց ես 300 հազարների քյասիբ չեմ: Խի դրանց փողո՞վ ես պետք է որդուս թաղումն անեի»,- հուզված ասաց հայրը:

Նա նշեց, որ ինքն ու կինն են որոշել Երեւան տեղափոխել տղայի դին: «Մենք երկրից էինք ուզում գնալ»,- ասաց հայրը:[41]
Իսկ դեպքի հետ կապված՝ իրավապաշտպան Արթուր Սաքունցը քննադատում է սպանված զինվոր Լյուքս Ստեփանյանի դին Երեւան տեղափոխելու վերաբերյալ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի հայտարարությունը, թե «դա լրիվ կազմակերպված է եղել»: «Պաշտոնական տեսակետն է, թե դա հրահրված է եղել, դրդել են: Ես հարց եմ տալիս, ո՞վ է հրահրել, ո՞վ է դրդել, ո՞վ է եղել: Նախարարության մամուլի խոսնակը պետք է հրապարակի ինֆորմացիայի աղբյուրը, կամ ով է գնացողը եղել: Եթե դու ասում ես, որ հրահրող է եղել ու դա արել է իրավապաշտպան կազմակերպությունը, ապա բարի եղիր հրապարակել անունը: Շատ իրավապաշտպան կազմակերպություններ եւ հ/կ-ներ կան, թող հրապարակի հրահրողի անունը: Դա համարում եմ ապատեղեկատվություն եւ խառնաշփոթ ստեղծելու միտում, ապատեղեկատվություն, որի նպատակը բուն խնդրից ուշադրությունը շեղելն է: Հաստատ այդ իրավապաշտպան հ/կ-ն պատասխանատու չէ այն պատճառների համար, որը հանգեցրել են այդ դեպքին»,- Aravot.am-ին հայտնել է իրավապաշտպան Արթուր Սաքունցը՝ մեկնաբանելով իրավապաշտպան կազմակերպություններին ուղղված մեղադրանքները, թե իրենք են սպանված զինվորի ծնողներին հրահրել նրա դին Երեւան բերելու հարցում: Նա ապատեղեկատվություն է համարում նաեւ ՊՆ մամուլի խոսնակի մեկ այլ հայտարարություն, թե նախնական տվյալներով սպանվածը ինքն է հրահրել դեպքը, ժամապահին հայհոյանք տալով. «Նա գերազանցում է սեփական լիազորությունները,

[41] http://zham.am/am/news/6437.html

որովհետեւ նման դեպքերում, երբ ուսումնահիրությունների հիման վրա ենք հարցեր բարձրացնում, ասում ենք քննությամբ կպարզվի, իսկ հիմա մինչեւ քննության պարզվելը տալիս են կանխակալ վերաբերմունք, որը նույնպես գնահատում եմ ապակողմնորոշման դրսեւորում»: Ա. Սաքունցը, հաշվի առնելով բանակում մահացության դեպքերի քննության փորձը, կասկածներ ունի, թե արդյոք օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն կկատարվի. «Առավել եւս, որ մի դեպքում լրիվ մեղադրում են ու ամբողջ դժգոհության սլաքն ուղղում են արդեն կալանավորված զինծառայողի ուղղությամբ եւ ոչ մեկ չի ասում՝ որոնք են այն պատճառները եւ այն հանգամանքները, որոնք հանգեցրել են զենքի կիրառմանը: Կրկին չսպասելով քննության արդյունքներին՝ պաշտոնական ամենաբարձր մակարդակով տրվում են գնահատականներ, ըստ էության, կանխորոշում են քննության ելքը: Սա արդեն իսկ կասկածելի է ու օբյեկտիվ մոտեցում չէ»: [42]

Հարկ է նշել, որ մինչ այժմ ՀՀ պաշտպանության նախարարության մամլո խոսնակն այդպես էլ չի հրապարակել այն իրավապաշտպանների անունները, որոնք ըստ իրենց, կազմակերպել էին սպանված զինվոր Լյուքս Ստեփանյանի դին Երեւան տեղափոխելը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործողությունները դեպքի առթիվ

2013թ մայիսի 25-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Նոյեմբերյանի զորամասում մայիսի 15-ին սպանված ժամկետային զինծառայող Լյուքս Ստեփանյանի ծնողների, հարազատների եւ համագյուղացիների կողմից զինված ուժերում շարունակական բնույթ կրող մահվան դեպքերի նկատմամբ 2013 մայիսի 18-ին կազմակեպված Երեւան-Սեւան մայրուղում բողոքի ակցիային ՀՀ ոստիկանության, ռազմական ոստիկանության եւ զինվորական հատուկ ուժերի, ներառյալ ՀՀ զինվորական դատախազ Գեւորգ Կոստանյանի, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եւ ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի կողմից երթը խոչընդոտելու վերաբերյալ արձանագրում է, որ

[42] http://www.aravot.am/2013/05/20/245547/

1. բողոքի մասնակից քաղաքացիների նկատմամբ բռնությունների կիրառմամբ սահմանափակվել է քաղաքացիների տեղաշարժի եւ միավորումների ազատության իրավունքը
2. զինված ուժերի ստորաբաժանումները հերթական անգամ օգտագործվել են խաղաղ հավաքի մասնակիցների դեմ, որը համարվում է սահմանադրական նորմի կոպիտ խախտում:

Այդ հայտարարությամբը գրասենյակը ՀՀ գլխավոր դատախազից պահանջել է.

1. իրականացնել համապատասխան քննություն եւ պարզել, թե ովքեր են հրաման արձակել զինված ուժերի ստորաբաժանումները իրենց մշտական տեղակայման վայրից Երեւան-Սեւան մայրուղի տեղափոխել:
2. հարուցել քրեական գործ եւ պատասխանատվության ենթարկել պաշտոնական դիրքը չարաշահած անձանց: [43]

Քանի որ քաղաքացիների բողոքի խաղաղ ակցիային խոչընդոտելը եւ առավել եւս դրանում զինված ուժերի ներգրավումը հակասահմանադրական է, 2013 թ. մայիսի 29-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հարցում է հղել ՀՀ պաշտպանության նախարարին՝ խնդրելով պարզաբանել, թե ով կամ ովքեր էին զինված ուժերի ստորաբաժանումներին հրամայել իրենց մշտական տեղակայման վայրից Երեւան-Սեւան մայրուղի տեղափոխվել:

2013 թ. հունիսի 18-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացվել է պատասխան, ըստ որի «18.05.13թ. Երեւան-Սեւան մայրուղում կազմակերպված բողոքի ակցիային խոչընդոտելու կամ կանխելու հրաման պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության ստորաբաժանումներին չի տրվել, առավել եւս այդպիսի մտադրություն չի էլ եղել:

ՀՀ ՊՆ Սեւանի կայազորի ռազմական ոստիկանության բաժինը տեղեկություն ստանալով, որ Երեւան-Սեւան մայրուղում մարդկային մեծ կուտակումներ կան, որը էական դժվարություններ կարող էր առաջացնել ինչպես զինվորական ավտոշարասյունների ռազմավարական տեղաշարժերին, այնպես էլ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից օպերատիվ հրատապ միջոցառումների

[43] http://hcav.am/events/%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80%D5%AB-%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D5%A2%D5%B8%D5%B2%D5%B8%D6%84%D5%AB-%D5%A1%D5%AF/

իրականացմանը, այդ իսկ պատճառով ՊՆ ռազմական ոստիկանության բաժնի համապատասխան աշխատակիցները մեկնել են այնտեղ եւ ընդամենը փորձել են պարզաբանել»:

Փաստորեն ստացվում է, որ Երեւան-Սեւան մայրուղով տեղաշարժվող քաղաքացիները տեսականորեն կարող էին խոչընդոտել զինվորական ավտոշարասյուների ռազմավարական տեղաշարժին (ի դեպ նմանատիպ ռազմավարական տեղաշարժ կամ դրա անհրաժեշտություն կարծես թե նշված ժամանակահատվածում այդ տարածքում չի նկատվել), այդ պատճառով թույլատրելի է համարվել մեծաքանակ ամբողջական ստորաբաժանումների տեղափոխությունը տվյալ տարածք՝ ուղղակի «պարզաբանման համար»: Իսկ այն, որ նշված «պարզաբանումը» զուգորդվում է Լյուքս Ստեփանյանի հարազատների նկատմամբ բռնության կիրառմամբ, թերեւս պաշտպանական գերատեսչության կողմից համարվում է երկրորդական կամ հանդիսանում է «պարզաբանման» ընդունված ռազմավարական միջոց:

Թերեւս ավելի ընդունելի կլիներ, եթե ՀՀ պաշտպանական գերատեսչությունն այս անօրինական հրամանը բացատրեր Լյուքս Ստեփանյանի հուղարկավորության արարողությանը մասնակցելու նպատակով զինվորական ստորաբաժանումների տեղափոխման անհրաժեշտությամբ, նաեւ նշեր, որ ՊՆ նախաձեռնությամբ նմանատիպ ուշադրության կարժանան զինվորական ծառայության ընթացքում մահացած բոլոր զինծառայողները եւ նրանց ընտանիքները՝ անկախ մահվան պատճառներից եւ ընտանիքի գործողություններից: Փոխարենը գերատեսչությունը կրկին արդարացնում է զինված ուժերի ապօրինի կիրառումը սեփական քաղաքացիների դեմ եւ որպես հիմնավորում ներկայացնում առնվազն անտրամաբանական պատճառաբանություններ:

Պատասխանից թերեւս պետք է ենթադրել, որ Գեղարքունիքի եւ Տավուշի մարզի քաղաքացիները մինչ Սեւան-Երեւան մայրուղով խմբակային ենթեւեկության մեկնելը, նախապես պետք է ՀՀ ՊՆ-ից տեղեկություն ձեռք բերեն հնարավոր զինվորական տեղաշարժերի մասին, հակառակ դեպքում՝ կարող են ենթարկվել

ռազմական ոստիկանության եւ զինվորական ստորաբաժանումների կողմից անակնկալ շրջափակման:[44]

2. Սիփան Մովսիսյան

2013 թ-ի հունիսի 2-ին Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում հրազենային վնասվածքից մահացել է կուրսանտ Սիփան Մովսիսյանը:

Ս. Մովսիսյանը Վանաձոր քաղաքից էր, երեք եղբայրներից ավագը: Կուրսանտի դին բերվել է Ռազմական ինստիտուտ, որտեղ կազմակերպվել է հրաժեշտի արարողություն, որից հետո Սիփանի մարմինը տեղափոխել են Վանաձոր:

ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդ. 1-ին մասով (սպանություն) հարուցվել է քրեական գործ:

Արմեն Վլադիկի Մելքումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ ծառայելով ՀՀ ՊՆ N զորամասում որպես կուրսանտ, 2013թ. հունիսի 1-ին նշանակված լինելով զորամասի ներքին պահակախմբում, որպես պահակային, 01.06.2013թ. ժամը 19:00-ին կարգվել է որպես ժամապահ, նույն պահակախմբի պահակադիր, կուրսանտ Սիփան Գագիկի Մովսիսյանի կողմից հերթափոխ կատարելուց հետո, պահակայիններին պահակատուն ուղեկցելու ժամանակ, նույն զորամասի ավտոհավաքակայանի մուտքի մոտ, ժամը 21:05-ի սահմաններում, ընթրելու համար ավելի արագ պահակատուն գնալու հարցի շուրջ վիճաբանել է Ս.Մովսիսյանի հետ և փոխադարձ սեռական բնույթի հայհոյանքներ տալուց հետո, Ս.Մովսիսյանին ապօրինաբար կյանքից զրկելու, դիտավորությամբ իրեն ամրացված ինքնաձիգից կրակ արձակելով Ս.Մովսիսյանի կրծքավանդակի շրջանին՝ սպանել նրան:

17.09.2.013թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատաքննությունը շարունակվում է:

---

[44] http://hcav.am/events/%D5%BD%D6%87%D5%A1%D5%B6-%D5%A5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%B5%D6%80%D5%B8%D6%82%D5%B2%D5%AB%D5%B6-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%AA%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82/

Սիփանի հարազատները պատմում են, որ նա բացառիկ երիտասարդ էր, նրա դաստիարակությունն այնպիսին էր, որ ոչ ոքի չէր հայհոյի կամ նեղացնի: Իսկ սպանության նախնական վարկածին՝ հարազատները չեն հավատում: Նրանց խոսքով Սիփանն այնպիսի տղա չէր, որ վիճաբանություն սարքեր:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված նախնական տվյալների համաձայն՝ հերթափոխի ժամանակ Ա.Մելքումյանի եւ Ս.Մովսիսյանի միջեւ առաջացած վիճաբանության ընթացքում հնչել են փոխադարձ հայհոյանքներ, իսկ Ս.Մովսիսյանի կողմից չկրակողի հասցեին հնչեցված հայհոյանքից անմիջապես հետո, Ա.Մելքումյանը մենահատ կրակոց է արձակել նրա ուղղությամբ եւ պատճառել հրազենային մարմնական վնասվածք:

Ս.Մովսիսյանը տեղափոխվել էր «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն, որտեղ ժամը 22:20-ի սահմաններում մահացել էր:[45]

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները երկու անգամ փորձել են զրուցել մահացած կուրսանտի հարազատների եւ ընկերների, ինչպես նաեւ հարեւանների հետ, սակայն ներկա գտնվող եւ ընտանիքի բարեկամ ներկայացած անձը եւ կուրսանտները թույլ չեն տվել որեւէ մեկի հետ զրուցել եւ ճշտել դեպքի մանրամասները: Գրասենյակի աշխատակիցներին մշտապես հետեւում էր ոչ միայն վերոնշյալ անձը, այլեւ հավաքվածներից ոմանք, որոնք փորձում էին հսկել յուրաքանչյուր քայլը:

Մոտ կես ժամ բազմաթիվ անձանց «հսկողության» տակ գտնվելուց հետո, կազմակերպության աշխատակիցները փորձել են զրուցել հարեւաններից մեկի հետ, որը տուն մտնելու ճանապարհին էր, սակայն վարկյաններ անց, հավանաբար Սիփանի համակուրսցիները, ովքեր նույն ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտներ էին, շրջապատել են կնոջը եւ փորձել դադարեցնել խոսակցությունը գրասենյակի աշխատակիցների հետ՝ հիմնավորելով, որ հարմար վայրը եւ ժամանակը չէ զրուցի համար:

Գրասենյակի աշխատակիցների ներկա գտնվելու պահին մշտապես հավաքված են եղել տասնյակ բարձրաստիճան զինվորականներ եւ կուրսանտներ,

[45] http://haynews.am/hy/1370205457

Վանաձոր քաղաքի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, Վանաձորի քաղաքապետը, ինչպես նաեւ Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը:[46]

Դիտավորյալ սպանություն/Անզգուշության հետեւանքով

1. Արտակ Գալստյան

2013 թ-ի հունվարի 26-ին՝ ժամը 23:40-ի սահմաններում, ըստ նախնական տվյալների՝ Հայաստանի ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Յուրի Հրայրի Գարեգինյանը մարտական դիրքում, իրեն ամրակցված ինքնաձիգից կրծքավանդակի շրջանում մահացու հրազենային վիրավորում է հասցրել ժամկետային զինծառայող, ավագ սերժանտ Արտակ Գրիգորիի Գալստյանին:[47]

Արտակ Գալստյանի սպանության գործով ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում քրեական գործ է հարուցել ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի (սպանություն) հատկանիշներով:[48] ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Յու.Գարեգինյանը նշանակված լինելով մարտական դիրքում որպես դիտորդ, դիտորդի պարտականությունները սահմանված կարգի համաձայն կատարելու արդյունքում է իրեն ամրացված ինքնաձիգով կրակոց արձակել Ա.Գալստյանի ուղղությամբ:

25.06.2013թ. քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (արարքի մեջ հանցակազմ չկա):[49]

Սոլակ գյուղի գյուղապետի փոխանցմամբ, Արտակը ծառայության է մեկնել իր զույգ եղբոր հետ: Արդեն 1 տարի եւ 2 ամիս է ինչ մեկնել են ծառայության: Վերջին անգամ արձակուրդ են եկել 1.5 ամիս առաջ իրենց պապիկի հուղարկավորությանը: Գյուղապետի պատմելով, որ նրանք սոցիալապես միջին պայմաններում ապրող

---

[46] http://hcav.am/events/%D5%B9%D5%B0%D5%A1%D5%BB%D5%B8%D5%B2%D5%BE%D5%A5%D6%81-%D5%B3%D5%B7%D5%BF%D5%A5%D5%AC-%D5%A4%D5%A5%D5%BA%D6%84%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/
[47] http://lurer.com/?p=72233&l=am
[48] http://www.chi.am/index.cfm?objectid=A8E54500-6AEC-11E2-8121F6327207157C
[49] Պաշտոնական (ՀՀ զինվորական դատախազություն), գրություն (կետ 25)

ընտանիք են, երեք եղբայր են: «Մինչեւ ծառայության մեկնելը հորն էին օգնում, բանվորություն էին անում: Վերին աստիճանի համեստ երեխաներ են: Հրամանատարն էլ, որ եկել էր, ասում էր, որ շատ խելացի, արտակարգ տղաներ են»,- ընդգծեց գյուղապետը: Ըստ գյուղապետի՝ Արտակի եղբայրը ծառայությունից արձակուրդ է եկել եղբոր հուղարկավորությանը մասնակցելու համար, սակայն շոկի մեջ է: Եղբայրն այնքան վատ վիճակում է, որ նույնիսկ գյուղապետն իրեն թույլ չի տվել նրան հարցեր տալ: [50]

Մարտական ծառայության կանոնների խախտման հետևանքով

1. Խաչատուր Կորյունի Խաչատրյան

ԼՂՀ պաշտպանության բանակի հարավ արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում 2013 թ-ի սեպտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը՝ ժամը 03.10-ի սահմաններում, մահացու հրազենային վիրավորում է ստացել 1994թ. ծնված Խաչատուր Կորյունի Խաչատրյանը:[51]

Ըստ ՀՀ զինվորական դատախազության տեղեկությունների՝ Տիգրան Մելիքի Հակոբյանը դիտորդի պարտականություններն իրականացնելու ժամանակ խրամուղում նկատել է մարդու կերպարանք եւ խախտելով մարտական հերթապահության կանոնները, առանց նախազգուշական գործողություններ կատարելու, իրեն ամրացված ինքնաձիգից անհարկի մենահատ կրակոցներ է արձակել, որի հետեւանով նույն դիրքի պարտաֆիր ժամկետային զինծառայող, տվյալ պահին դիտորդ կարգված, շարքային Խաչատուր Կորյունի Խաչատրյանը ստացած հրազենային մարմնական վնասվածքներից մահացել է՝ դրանով իսկ առաջացրել ծանր հետեւանք:

Փաստի առթիվ 15.09.2013 թ-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 365 հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահության կամ

[50] http://asekose.am/news/4/115137-news-armenia.html
[51] http://www.tert.am/am/news/2013/09/15/conscript-killed/
http://nkrmil.am/main/am/newsMore615.html

մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ:

21.09.2013 թ-ին Տ. Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 365 հոդվածի 3-րդ մասով, Ա. Զոհրաբյանին՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով, իսկ Ա. Մարտիրոսյանին՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 365 հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը Տ. Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ Ա. Զոհրաբյանի եւ Ա. Մարտիրոսյանի նկատմամբ՝ զորամասի հրամանատարության հսկողության հանձնելը:

Նախաքննությունը շարունակվում է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Տիգրանն ու Խաչատուրը սահմանին միասին են ծառայություն իրականացրել: Գիշերը՝ ուշ ժամի, Տիգրանը նիրհել է, իսկ Խաչատուրը բարձրացել է վերեւ՝ իրավիճակը ստուգելու, որ համոզվի՝ արդյոք ամեն ինչ կարգին է: Այդ ընթացքում Տիգրանն արթնացել է եւ լսել սահմանի կողմից եկող ոտնաձայներ ու նկատել շարժվող շողք. նա անմիջապես հարցրել է գաղտնաբառը. «Պառո՛ղը ասա, պառողը»:

Սակայն որեւէ արձագանք չի ստացել եւ այդ լռությունից վախեցած՝ մի քանի կրակոց է արձակել դեպի իրեն եկող շողքի ուղղությամբ: Ավելի ուշ պարզվել է, որ սահմանից եկողը իր ծառայակից ընկերն էր:[52]

1994թ. ծնված Խաչատուր Կորյունի Խաչատրյանը հայկական բանակում հասցրեց ծառայել ինն ամիս: Նա զորակոչվել էր 2012թ աշնանը: Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանի 1-ին կուրսի ուսանող էր, ուներ իրենից մեծ եղբայր, հայրը գտնվում է արտագնա աշխատանքի մեջ: Ընտանիքը Երեւանում բնակվում է վարձով:

«Առաջին լրատվական»-ի փոխանցմամբ Խաչատուրը Դավիթաշեն գյուղի թոռ էր, այդ պատճառով նրան հուղարկավորել են Դավիթաշենի գերեզմանոցում:

Դավիթաշենի գյուղապետ Գրիգոր Վարդանյանի խոսքերով. «Խաչատուրը գալիս-գնում էր գյուղ, հանգիստ բնավորություն ուներ, բոլորովին կռվարար չէր, բոլորը գիտեն, որ նա հանգիստ բնավորություն ուներ»:

[52] http://www.1in.am/arm/press_parmenia_214925.html

Նա նշեց, որ Կորյուն Խաչատրյանը երկու որդի ունի: Մեկն արդեն զորացրվել է, մեկնել հոր մոտ՝ Ռուսաստանի Դաշնություն՝ աշխատանքի, մյուսը Խաչատուրն էր, որը մինչեւ բանակ գնալը մեկնել էր հոր մոտ՝ աշխատելու, ապա վերադարձել՝ բանակ գնալու համար: Գյուղապետը նաեւ նշեց, որ Խաչատուրը բանակ է գնացել Աջափնյակ համայնքի զինկոմիսարիատից:

Գյուղացիներից մեկի խոսքով՝ տղաների մեջ առկա է եղել կոնֆլիկտ, սակայն դա հարթվել էր, իսկ դեպքը տեղի է ունեցել երեկոյան, երբ Տիգրանը՝ չնկատելով, որ Խաչատուրը քնած է, մի քանի կրակոց է արձակել իր կողմը եկողի ուղղությամբ՝ կարծելով, թե հակառակորդի կողմից է:

Մյուս վարկածի համաձայն՝ Խաչատուրը մորը տեղեկացրել է, որ իրեն տեղափոխեն այդ զորամասից, այլապես իր հետ վատ բան կկատարվի: Մայրը նամակ է գրել Սեյրան Օհանյանին, սակայն այդպես էլ չի կարողացել այնտեղ հասցնել. տղայի մահվան լուրն են բերել:[53]

Խաչատուր Խաչատրյանի մահվան կապակցությամբ հարուցված քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել 3 զինծառայողի՝ Տիգրան Հակոբյանին, Արթուր Զոհրաբյանին եւ Արթուր Մարտիրոսյանին:

Սպանության դեպքերը հիմնականում տեղի են ունեցել կանոնադրային հարաբերությունների խախտման, դիտավորյալ սպանության եւ մարտական ծառայության կանոնների խախտման հետևանքով:

Դ. Առողջական խնդիրների/ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման հետեւանքով մահվան դեպքեր

1. Արմենակ Մանուչարի Մկրտչյան

2013 թ-ի հունվարի 17-ին, ժամը 05:30-ին միոկարդի սուր ինֆարկտ հարցականով, թոքային զարկերակացողունի թրոմբոէմբոլիա հարցականով, սուր սիրտ-թոքային անբավարարություն ախտորոշմամբ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայող Արմենակ Մանուչարի Մկրտչյանը:

[53] http://www.1in.am/arm/armenia_society_215350.html

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ Քրեական օրենսգրքի 376 հոդ. 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն:[54]

ՀՀ զինվորական դատախազության տվյալների համաձայն՝ գործի քննությամբ հիմնավորվել է, որ Ա. Մկրտչյանի մահը վրա է հասել օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայից ներքին օրգանների համատարած ախտահարումով զուգորդված անհայտ ծագման մանրէային ինֆեկցիայի հետևանքով, որով տառապել է հանգուցյալը կենդանության օրոք և որն էլ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ մահվան հետ:

Ա.Մկրտչյանի ախտորոշումները, զինվորական հոսպիտալ տեղափոխումը վերակենդանացման բաժանմունք ընդունելը, իրականացված բժշկական միջամտությունները, բուժումները եղել են ճիշտ: Ա.Մկրտչյանի մահը պայմանավորված է եղել հիվանդությամբ և բժշկագիտության տեսանկյունից կանխատեսել նման հիվանդությունների զարգացումը հնարավոր չէ:

Ըստ ՀՀ զինվորական դատախազության տվյալների՝ 11.10.2013թ. որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով (քրեական գործ չի կարող հարուցվել եւ քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա[55]):

ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող 18-ամյա Արմենակ Մկրտչյանը մինչեւ հոսպիտալ տեղափոխվելը ջրծաղիկով հիվանդ է եղել: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասել է Արմենակ Մկրտչյանի քեռին՝ Նվեր Վարդանյանը:[56]

«Մենք առողջ երեխա ենք ուղարկել, բայց այդ ընթացքում ջրծաղիկ է ընկել: Մի օրվա մեջ տարել են սանչաստ, այդ գիշերվա մեջ վատացել է, տարել են հոսպիտալի

---

[54] http://www.1in.am/arm/armenia_society_150620.html
http://www.epress.am/2013/01/17/Զինծառայողը-մահացել-է-հոսպիտալում-սր.html

[55] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1450 (ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ)
[56] http://news.am/arm/news/137459.html

վերակենդանացման բաժին: 5 օր այնտեղ պառկել է ու էլ չգիտենք ինչ է եղել»,- ավելացրեց Արմենակ Մկրտչյանի քեռին: Ինչպես նաեւ փոխանցեց, որ այս պահին ավելին չի կարող ասել մինչեւ դատաբժշկական փորձաքննության արդյունքները չստանան: Իսկ փորձաքննության արդյունքները սպասում են, որ մինչեւ հունվարի վերջ արդեն պատրաստ կլինի:

Ավելի վաղ NEWS.am տեղեկացրել էր, որ ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող 18-ամյա Արմենակ Մկրտչյանը, ով հունվարի 17-ին մահացել է Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում դեկտեմբերին էր զորակոչվել բանակ եւ վախենում էր մթությունից: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց Սյունիքի մարզի Սվարանց գյուղի գյուղապետ Արթուր Մարգարյանը: Գյուղապետը փոխանցել էր, որ շուրջ 1.5 տարի է, ինչ նա մութն ընկնելուց հետո տանից դուրս չէր գալիս: «Արմենակի մոր պատմելով մի գիշեր շունը կտրել է Արմենակի ճանապարհը հաչացել, որից շատ ուժեղ վախեցել է»,- պատմել էր գյուղապետը: Արթուր Մարգարյանը նշել էր նաեւ, որ Արմենակի ծառայության կարճ ժամանակահատվածում նույնիսկ զորամասից շնորհակալագիր են ստացել, որ նա շատ լավ ծառայող է: «Հունվարի 12-ին Արմենակի պրիսյագն էր: Սակայն մայրը գնացել է զորամաս, ասել են, որ նա կոմայի մեջ է: Այնինչ՝ Արմենակի մայրը հունվարի 9-ին հենց մեր տանից խոսեց Արմենչոյի հետ եւ պայմանավորվեցին, որ պրիսյագից հետո գնալու են Ջրառատ պրիսյագը հորաքրոջ տանը նշելու»,- պատմել էր գյուղապետը:

2. Արտյոմ Գագիկի Հակոբյանը

2013 թ-ի հունվարի 18-ին, ժամը 20:55-ին Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է 13.01.2013թ-ից ԿԿԶՀ-ում բուժման մեջ գտնվող ՀՀ ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Արտյոմ Գագիկի Հակոբյանը /ծնված 1994թ/: Արտյոմ Հակոբյանը զորակոչվել էր 2012 թ-ին Կապանի զինկոմիսարիատից:[57]

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ գործի քննությամբ հիմնավորվել է, որ Ա. Հակոբյանի մահը վրա է հասել օրգանիզմի ընդհանուր

[57] http://news.am/arm/news/136599.html

ինտոքսիկացիայից, որն էլ պայմանավորված է եղել ջրծաղիկից հետո զարգացած գլխուղեղի կիսագնդերում խիստ արտահայտված շճաթարախային բրոնխոպնևմոնիայով, հեպատիտով, պիոլոնեֆրիտով և բազմաօրգանային անբավարարությամբ, որոնցով տառապել է հանգուցյալը կենդանության օրոք և որոնք էլ գտնվում են ուղղակի պատճառական կապի մեջ մահվան հետ:

Ա. Հակոբյանի ախտորոշումները զինվորական հոսպիտալում, տեղափոխումը ԿԿԶՀ-ի վերակենդանացման բաժանմունք, իրականացված բժշկական միջամտությունները, բուժումները եղել են ճիշտ, սակայն կանխել նրա մահը հնարավոր չի եղել:

Ըստ ՀՀ զինվորական դատախազության տվյալների՝ 11.10.2013թ. որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, արարքներում հանցակազմ չլինելու պատճառաբանությամբ:

Արտյոմ Գագիկի Հակոբյանը Սյունիքի մարզի Քաջարան գյուղից էր: Քաջարանի գյուղապետը տեղեկացրել է, որ Արտյոմը ավարտել էր ուսումնարանը եւ մեկնել ծառայության:

Նա նշել, որ երեխայի մահվան հետ կապված տարբեր բաներ են ասում, ասում են, թե ջրծաղիկից է մահացել: Հորեղբոր որդին նշել է, որ Արտյոմը առողջ երիտասարդ էր, երբեւէ գանգատներ չի ունեցել:

Հիշեցնենք, որ «Հեմորագիկ ինսուլտ, սպոնտան մասիվ սուբարախնոիդալ արյունազեղում արտահայտված ուղեղի մեդիալ հատվածներում, ուղեղի այտուց, ուղեղաբնի երկրորդային համախտանիշով, վիճակ տարած ջրծաղիկից հետո» ախտորոշմամբ հունվարի 13-ին ընդունվել է N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արտյոմ Գագիկի Հակոբյանը:

3. Թադեւոս Ուղոյան[58]

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2013 թ. հուլիսի 24-ին ստացել էր հավաստի տեղեկություններ, որ 2013 թ. հուլիսի 22-ին, ԼՂՀ-ի զորամասերից մեկում սրտի կանգից մահացել է զինծառայող: ՀՀ

58 *Պաշտոնական (ՀՀ Զինդատախազություն)՝ Ուղուրյան*

պաշտպանության նախարարությունը այս մասին որեւէ տեղեկատվություն չէր տարածել:[59]

Հետագայում պարզվել է, որ մահացողը 27-ամյա պայմանագրային զինծառայող ենթասպա Թադեւոս Ուղոյանն է (Ըստ ՀՀ զինդատախազության տվյալների՝ ազգանունը Ուղուրյան է): Նա մահացել է սրտամկանի սուր ինֆարկտից: Ուղոյանը զորակոչվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից:

Դեպքի վերաբերյալ հետագա մանրամասներ լրատվամիջոցներով չեն նշվել:

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ ենթասպա Թադեւոս Ուղուրյանը 22.07.2013 թ. զորամասի հերթապահի օգնականի պարտականությունները իրականացնելու ժամանակ ժամը 17:25-ին հերթապահի համար նախատեսված սենյակում մահացել է եւ «սրտամկանի կրկնակի ինֆարկտ» ախտորոշմամբ տեղափոխվել Ստեփանակերտի զինհոսպիտալ: Փաստի առթիվ նախապատրաստված նյութերով 02.08.2013 թ-ին որոշում է կայացվել ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Որեւէ տվյալ առկա չէ, թե արդյոք քրեական գործը հարուցելու մասին որոշումը բողոքարկվել է, թե ոչ:

4. Ալիկ Հայկի Ջանվելյան

2013 թ-ի սեպտեմբերի 3-ին, ժամը 13:00-ի սահմաններում պտտաձողի վրա վարժություններ կատարելուց հետո սահմանագոտում հանկարծամահ է եղել պայմանագրային զինծառայող, Տավուշի մարզի Կոթի գյուղի բնակիչ, 1983թ. ծնված Ալիկ Հայկի Ջանվելյանը:[60]

NEWS.am-ին Կոթի համայնքի ղեկավար Ֆելիքս Մելիքյանը տեղեկացրել է, որ նրա 5 երեխաներից փոքրը ամիսներ առաջ էր ծնվել: Ավելին՝ այս տարի պաշտպանության նախարարությունը պայմանագրային զինծառայողին, որպես սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիք եւ լավ ծառայող, գումար է հատկացրել տուն գնելու համար: Երիտասարդ, բայց բազմազավակ ընտանիքը

---

[59] http://hcav.am/events/եվս-մեկ-մահվան-դեպք-լոի-զորամասերից-մե/
http://www.1in.am/arm/armenia_society_201399.html
[60] http://ilur.am/news/view/17910.html

ամիսներ առաջ էր նոր տուն տեղափոխվել: Նա պայմանագրային հիմունքներով ծառայում է 2009թ-ից:[61]

Ըստ պաշտոնական տվյալների՝ նախնական վարկածով՝ Ալիկ Ջանվելյանի մահվան պատճառը սրտի կաթվածն է: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Այնուհետեւ ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ պայմանագրային զինծառայող, շարքային Ալիկ Հայկի Ջանվելյանի մահվան փաստի վերաբերյալ նյութերով հիմնավորվել է, որ նա մահացել է սրտի անոթների արյան շրջանառության և սրտամկանների անհավասարաչափ արյունազեղման հետևանքով:

Ըստ ՀՀ զինվորական դատախազության տվյալների՝ 13.09.2013թ. որոշում է կայացվել ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Ի դեպ, առողջական խնդիրների հետեւանքով գրանցված 4 մահվան դեպքերի առնչությամբ որոշում է կայացվել կամ քրեական հետապնդում չիրականացնել (ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, արարքներում հանցակազմ չլինելու պատճառաբանությամբ) եւ քրեական գործով վարույթը կարճել, կամ քրեական գործը հարուցելը մերժելու մասին (ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ բացակայում է հանցագործության դեպքը):

Տվյալ դեպքերով որեւէ տեղեկություն չկա այն մասին, թե արդյոք օբյեկտիվ ուսումնասիրություն է կատարվել՝ պարզելու համար զինծառայողները ստացել են պատշաճ բժշկական սպասարկում եւ օգնություն, մինչ զորակոչվելը ունեցել են առողջական խնդիրներ եւ թե արդյոք այս գործերով կայացված որոշումները բողոքարկվել են, թե ոչ:

Ե. Դժբախտ պատահարի հետևանքով

1. Արթուր Գեւորգյան

2013 թ-ի հունվարի 16-ին, ավտովթար է տեղի ունեցել Վայոց Ձորի մարզում: Ժամը 15:30-ի սահմաններում Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի 115 կմ

[61] http://m.news.am/arm/news/169567.html

հատվածում՝ Արփի գյուղի ճանապարհին, "Ուրալ" մակնիշի 33 16 Տ համարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ մոտ 40-50 մետր գլորվել է ձորը: [62]

Մահացել է Վայք քաղաքի բնակիչ, ՀՀ ՊՆ N զորամասի պայմանագրային զինծառայող Արթուր Գեւորգյանը, ով, ըստ նախնական տեղեկությունների, եղել է վարորդը, իսկ վիրավորը՝ Արարատի մարզի Արմաշ գյուղի բնակիչ Հուսիկ Ստեփանյանը:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում ՀՀ Քրեական օրենսգրքի 377 հոդ. 2-րդ մասով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) հարուցվել է քրեական գործ եւ կատարվել է նախաքննություն:63 ՀՀ Զինվորական դատախազության տվյալներով՝ 13.05.2013թ. քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով[64]:

2. Թովմաս Առաքելյան

2013 թ-ի մայիսի 2-ին, ժամը 06.01-ին տեղեկություն է ստացվել, որ Արարատի մարզի Եղեգնավան գյուղում ավտոմեքենա է ընկել ջրանցքը, կան տուժածներ. անհրաժեշտ է օգնություն:

Պարզվել է, որ «Օպել» մակնիշի 35 ՕՏ 105 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ շրջվել հարակից Կախանովի ջրանցքը:

Հրշեջ-փրկարարները հատուկ տեխնիկայի միջոցով ավտոմեքենան դուրս են բերել ջրանցքից. ավտոմեքենայում հայտնաբերվել է ՌԴ N ուղեկալի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ' 1990 թ. ծնված Թովմաս Առաքելյանի (Արարատի մարզի Վերին Արտաշատ գյուղ) դին:[65]

---

[62] http://henaran.am/news_view.php?post_id=15956
http://www.epress.am/2013/01/16/Զինվորական-«Ուրալը»-գլորվել-է-ձորը-կա.html
[63] http://www.ilur.am/news/view/6738.html
[64] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1450 (Քրեական գործ չի կարող հարուցվել եւ քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար)
[65] http://operativ.am/?p=15701

NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում Վերին Արտաշատի գյուղապետ Աշոտ Ղազարյանը հայտնել է, որ Թովմասն ունի իրենց մեծ մեկ եղբայր եւ փոքր քույր:

Տղայի հայրն արտագնա աշխատանքի է եղել Մոսկվայում եւ զանգի միջոցով են տեղեկացրել դժբախտ դեպքի մասին, նա հավանաբար այսօր արդեն կվերադառնա Հայաստան: «Շաբաթը մեկ անգամ էր գալիս տուն: Այդ օրը կամ հերթափոխի գնալուց են եղել կամ հերթափոխից գալուց: Մեքենան շրջվել է ջրատարը եւ երեք հոգի տուժել են, մյուս երկուսը կարողացել են դուրս գալ՝ նրանց կյանքին վտանգ չի սպառնում, իսկ Թովմասը դժբախտաբար մահացել է»,- մանրամասնել է գյուղապետը:[66]

2013թ. մայիսի 7-ին 168.am կայքում հրապարակված տեղեկության համաձայն՝ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Թովմաս Առաքելյանը եւ Արարատի մարզի Վեդի քաղաքի բնակիչ, 29-ամյա Կարո Բարսեղյանը եղել են ուղեւորներ, իսկ Արտաշատ քաղաքի բնակիչ, 25-ամյա Արմեն Կարապետյանը եղել է վարորդը: Ըստ առկա տեղեկությունների՝ երբ ավտոմեքենան ընկել է ջրանցքը, Ա. Կարապետյանն ու Կ. Բարսեղյանը հասցրել են դուրս գալ ավտոմեքենայից, ապա փորձել օգնել իրենց ընկերոջը, սակայն չեն կարողացել, եւ երբ համոզվել են, որ Առաքելյանը մահացել է, հեռացել են դեպքի վայրից եւ այդ մասին չեն ասել ոչ ոքի՝ մտածելով, որ երբ հայտնաբերվի ավտոմեքենան, իրավապահները քննությունը կտանեն այն ուղղությամբ, որ նա միայնակ է եղել ավտոմեքենայում եւ չի կարողացել դուրս գալ ջրանցքում հայտնված ավտոմեքենայից:[67]

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ Թովմաս Առաքելյանի մահվան փաստի վերաբերյալ քրեական գործը՝ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին: Մանրամասն տվյալներ այս գործի վերաբերյալ առկա չեն:

3. Արմեն Ռուստամի Ղուդաբաշյան

2013թ Մայիսի 17-ին, ժամը 20:30-ի սահմաններում Հայաստանի ՊՆ N զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Արմեն Ռուստամի Ղուդաբաշյանը, ընդգրկված լինելով վերակարգում, հոսանքահարվել է եւ գիտակցության չգալով մահացել:[68]

---

[66] http://m.news.am/arm/news/151698.html
[67] http://168.am/2013/05/07/221795.html
[68] http://lurer.com/?p=101186&l=am

Այս տեղեկատվությունը տարածվել է ԶԼՄ-ներում եւ նշվել, որ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Սակայն, ՀՀ պաշտպանության նախարարության եւ ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ ՀՀ ՊՆ քննչական ծառայության որևէ ստորաբաժանումում Արմեն Ղուդաբաշյանի մահվան վերաբերյալ քննություն չի կատարվել նման դեպք արձանագրված չլինելու պատճառով:

4. Ալեքսանդր Ատավին

2013 թ-ի հունիսի 2-ին, ավտովթար է տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 20:40-ի սահմաններում ՌԴ քաղաքացի, Կրասնոդար քաղաքի բնակիչ, 27-ամյա Ալեքսանդր Ատավինը, վարելով BMW մակնիշի 34 VO 060 համարանիշի ավտոմեքենան, Գյումրի քաղաքի Բուլվար թաղամասից դեպի Մուշ թաղամաս ընկած ճանապարհահատվածում ավտոմեքենայով կողաշրջվել է:

Ա. Ատավինը ծառայում էր ՀՀ-ում ՌԴ Զինված ուժերի դիվիզիայում, կոչումով ավագ լեյտենանտ էր:[69]

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ նկատի ունենալով, որ Ալեքսանդր Վիկտորի Ատավինը խախտել է «ՃԵԿ»-ի 65-րդ կետի պահանջները և վթարի պատճառով բացի իրենից որևէ այլ անձ մարմնական վնասվածք չի ստացել, իսկ ինքն էլ վթարի հետևանքով մահացել է, ուստի 12.06.2013թ. որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: Որեւէ տեղեկություն այն մասին, թե քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը բողոքարկվել է, թե ոչ, առկա չէ:

[69] http://lurer.com/?p=104787&l=am

5. Գեւորգ Հովհաննիսյան
6. Ռուբեն Բաղյան

2013 թ-ի սեպտեմբերի 8-ին, ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 06:00-ի սահմաններում Opel Vectra մակնիշի 32 OS 479 համարանիշի ավտոմեքենայի վարորդը Սեւան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի 17-րդ կմ հատվածում՝ Լճափ գյուղի խաչմերուկում, դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ գլխիվայր շրջվելով հայտնվել դաշտամիջում գտնվող ժայռաբեկորների վրա: Վթարի հետեւանքով 2 հոգի տեղում մահացել են, 2 հոգի՝ 51-ամյա Զավեն Հակոբյանը եւ 25-ամյա Արամ Հակոբյանը, մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Գավառի բժշկական կենտրոն: Մահացածներ Գեւորգ Հովհաննիսյանն ու Ռուբեն Բաղյանը ժամկետային զինծառայողներ են եղել:[70]

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ 04.11.2013թ. թիվ 40107813 քրեական գործն ուղարկվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

7. Ժակ Գալստյան

2013 թ-ի հոկտեմբերի 11-ին ՊԲ արնելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով՝ ժամը 13:30-ի սահմանում զինվորական հոսպիտալում մահացել է ժամկետային զինծառայող, 1993 թ. ծնված Ժակ Գևորգի Գալստյանը:[71]

Ըստ զինվորական դատախազության տվյալների՝ փաստի առթիվ 11.10.2013 թ-ին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով:

---

[70] http://shamshyan.com/arm/2013-09-08-crash-martuni-getaph.html
[71] http://nkrmil.am/main/am/newsMore623.html

16.11.2013 թ. նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն, որի եզրակացությունը դեռեւս չի ստացվել:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Զ. Զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետևանքով

1. Վոլոդյա Սեդրակի Ավագյան

2013 թ-ի մարտի 20-ին ժամը 19.05-ի սահմաններում ՊԲ հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում մահացու հրազենային վիրավորում է ստացել 1993 թ-ին ծնված Վոլոդյա Սեդրակի Ավագյանը:[72]

Ըստ լրատվամիջոցների՝ Վոլոդյա Սեդրակի Ավագյանի մահացու հրազենային վիրավորում ստանալու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ):[73]

ՀՀ զինվորական դատախազության տվյալներով՝ 25.03.2013թ. Սերոբ Սոսի Բուդաղյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդ. 2-րդ մասի 10-րդ կետով և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

28.09.2013թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Քրեական գործով դատաքննությունը շարունակվում է:

Վոլոդյա Ավագյանը Լոռու մարզի Կաթնառատ գյուղից էր, դպրոցն ավարտելուց հետո անմիջապես մեկնել է զինվորական ծառայության:

Նրա համագյուղացիները NEWS.am-ին պատմել են, որ Վոլոդյա Ավագյանն արդեն 1,5 տարվա զինծառայող էր եւ պետք էր աշնանը զորացրվեր: Նա ընտանիքի կրտսեր զավակն է, ուներ երկու քույր, որոնք ամուսնացած են: Ընտանիքը գտնվում է

---

[72] http://operativ.am/?p=11138/%D4%B6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80-%D5%A7-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%22

[73] http://aysor.am/am/news/2013/03/26/volodya-sedraki-avagyan/

ծանր սոցիալական պայմաններում, աշխատանք չունեն, փոխարենը ծնողները վարկեր ունեն:

Ծնողներին եւ հազարատներին հայտնել են, թե դեպքը անզգուշության հետեւանք է: Զինծառայողները բարձրացել են դիրքեր, զենքը լիցքավորելու ժամանակ դրա օգտագործման կանոնների խախտման հետեւանքով ծառայակցի զենքից կրակոց է արձակվել իր ուղղությամբ, եւ նա տեղում մահացել է:

Վոլոդյա Ավագյանի մահվան փաստով հարուցված քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Ս. Բ-ին: Վերջինս ձերբակալվել է: Վ. Ավագյանի ծնողները առայժմ մանրամասներ չգիտեն իրենց որդու մահվան մասին: Նրանց միայն ասվել է, որ իրենց որդին պատահականության զոհ է դարձել, սակայն դեռևս հայտնի չէ, թե ինչ պատահականության մասին է խոսքը:

2. Նարեկ Ժորիկի Հովսեփյան

2013 թ-ի հուլիսի 22-ին ժամը 12:30-ի սահմաններում ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետեւանքով մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 19 տարեկան Նարեկ Հովսեփյանը[74] /ծնված 1994թ./:

iLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ դեպքը տեղի է ունեցել Ստեփանակերտից ոչ հեռու գտնվող «Հայկազով» զորամասում:

Ժամկետային զինծառայող Նարեկ Հովսեփյանը Վանաձորից էր: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2012թ աշնանը՝ նոյեմբերին զորակոչվել էր ծառայության, նա 9 ամսվա զինծառայող էր: Նարեկի զորակոչվելուց հետո Նարեկի հայրը, մայրը, եղբայրը, մեկնել էին ՌԴ: Դեպքից հետո հարազատները վերադարձել են Հայաստան:

Բարեկամները պատմել են միայն, որ սկզբում իրենց ասել են, թե Նարեկն ինքնավնասվել է, բայց հետո իմացել են, որ հրազենը ծառայակիցներից մեկի կողմից է գործածվել:

---

[74] http://www.epress.am/2013/07/23/լդի-պաշտպանության-բանակում-զինծառայ.html
http://nkrmil.am/main/am/newsMore593.html

Նարեկ Հովսեփյանի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ գործով ձերբակալվել է Նարեկ Հովսեփյանի համածառայակից 20-ամյա Անդրանիկ Մելքոնյանը:

ՀՀ Զինվորական դատախազության տվյալներով՝ 26.07.2013թ. Անդրանիկ Մարզպետի Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդ. 3-րդ մասով և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

07.11.2013թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործողությունները դեպքի առթիվ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Նարեկի հարազատների հետ զրուցել եւ մի քանի խորհուրդներ են տվել նրանց դիահերձումից առաջ:

Տարածված լուրերի համաձայն՝ դեպքը տեղի է ունեցել զենքը մաքրելու ժամանակ, սակայն, ըստ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի՝ դեպքը տեղի չէր ունենա, եթե զորամասի սպայական անձնակազմը լիներ ավելի ուշադիր եւ պահպանվեին զենքի հետ վարվելու անվտանգության բոլոր կանոնները:

Դեպքի օրը զինվորները եղել են հրաձգարանում եւ զենքերից մեկը խցանվել է: Անսարքությունը չեն վերացել հրաձգարանում, եւ զինվորները զենքն իրենց հետ բերել են զինանոց, որտեղ փորձել են իրենց ուժերով շտկել, որը պետք է արվեր անվտանգ տարածքում՝ մասնագետի կողմից:[75]

Տարածված խոսակցությունների համաձայն՝ դեպքը տեղի է ունեցել զորավարժություններից հետո (որոշ մասի պնդմամբ՝ նաեւ ընթացքում): Ըստ այդմ,

[75] http://hcav.am/events/%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8%D5%9D-19-%D5%A1%D5%B4/

ծառայակից ընկերը պատահաբար կրակել է՝ չնկատելով դիմացը կանգնած Նարեկին: Մեկ ուրիշն էլ նշել է, որ դեպքը տեղի է ունեցել զենքը մաքրելու ժամանակ, երբ կրակողը չիմանալով, որ զենքի պահեստատուփի մեջ փամփուշտ է մնացել, անզգուշությամբ կրակել է:[76]

Նարեկի վրա կրակողը նրա ծառայակից Անդրանիկ Մելքոնյանն է՝ Չարենցավանից: Նարեկի մոր խոսքերով դեպքի պատճառը զոհվածի ընտանիքին հրամանատարությունն է հայտնել՝ ներկայացնելով այն որպես անզգուշության հետեւանք: «Իբր 3 հոգի քննություն հանձնելուց են եղել կրակայինում, սպա դառնալիս են եղել, ինչ դա էլ ճիշտ չգիտեմ պաշտոնները, մեկը քննությունն ստանում է, երկուսը չեն ստանում: Հետո հրաման են ստանում, որ ընդմիջում է, դադարեցրեք կրակը: Ու 20 փամփուշտ է ստացած լինում ինչ-որ 18-ը կրակած է լինում, 1-ը ազատ գրպանում է լինում դեռ, էդ 1-ը զենքի մեջ է լինում: Ժամկետային զինծառայող լինում են Նարեկս ու ինչ-որ մի երեխա, նրանց ասում են, որ զենքերը բերեն: Կրակողը նա չի եղել: Ավտոմատը ձեռքին գալիս է, որ չի կարում փամփուշտը միջից հանի, տեղը գցի, օրապահը կանգնած է լինում, օրապահին ասում է՝ հին ծառայող ես, կարո՞ղ է դու կարողանաս: Պատկերացրեք՝ զենքը հասել է զորամաս, երեխեքը զենքով խաղ են անում: Ես դա նմանացնում եմ մի դասամիջոցի, որ դասատուն դուրս է եկել, ու երեխեքը ինչ ուզեն, կարող են անել: Մեղավորը ո՞րն է, էդտեղ անմեղ մարդ կա՞. զենքին անտեղյակ երեխեն խաղ է արել զենքով: Ու ես հիմի հանկարծ ասեմ՝ իմ երեխեն խաղաղ պայմաններում զոհվել է՞, ես ո՞նց կարող եմ դա ասել»,- վրդովվում է տիկին Ռուզաննան:

Նարեկի մահվան վկայականում նշված է՝ աջ եւ ձախ թոքերի հրազենային վնասվածք, սրտի հետին պատի վնասվածք: Նարեկին որեւէ բժշկական օգնություն չի ցուցաբերվել, զորամասում էլ մահացել է: Մայրը չգիտի՝ մահն անմիջապե՞ս է վրա հասել, թե՞ ուշ: «Այդ հարցի պատասխանը ինձ էլ չեն կարողացել տան իրենք: Կրակել է թեւի տակի ուղղությամբ, վնասել է 2 թոքերը, սրտի հետին պատով եկել է մյուսով դուրս եկել: Եթե սրտի միջով անցներ, կմտածեի, որ իրեն փրկելու հնարավորություն չկա, բայց եթե հետին պատով ընդամենը կպել-անցել է, չգիտեմ: Մահը վրա է հասել հեմոռագիկ շոկից, այսինքն՝ արյան կորստից: Բայց արյան կորստից այդպես

[76] http://news.am/arm/news/163853.html

ակնթարթային մահ չի լինի: Ոչ մի բան չեն արել: Դա ինչ վաշտ է, դա ինչ հրամանատարություն է, որ մի ֆիզլուծույթ, մի հեմոթեզ, մի ինչ-որ բան չի եղել այնտեղ, որ մի հատ սիստեմ միացնեն կաթիլային, որ պահպանվեր արյան շրջանառությունը, ու երեխուն հասցնեն Ստեփանակերտ, որ ընդամենը 6 կմ հեռավորության վրա է գտնվում: Նոր եմ հետաքրքրվելու, թե ինչ բժշկական ապահովվածություն ունի մեր բանակը»: [77]

Հրամանատարությունը դեպքը պատահականություն է համարում, սակայն ընտանիքի անդամները կարծում են, որ պատահականությունը եղել է հրամանատարական անզնակազմի կրկնակի անփութության հետեւանքով:

3. Գևորգ Մնացականյան

2013 թ-ի հոկտեմբերի 16-ին, ժամը 20:30-ի սահմաններում ՀՀ հյուսիսարևելյան սահմանագոտում տեղակայված զորամասի հսկողության տարածքում մարտական խնդիր իրականացնելիս մահացու ականապայթյունային վիրավորում է ստացել ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի հրամանատար, կապիտան Գևորգ Գագիկի Մնացականյանը (ծնված 1988թ., ծառայում էր 2005թ.-ից, Գավառի զ/կ):

Տարբեր աստիճանի վնասվածքներով Երևանի ԿԿԶՀ են տեղափոխվել ավագ լեյտենանտ Գարուշ Վերիկի Համբարձումյանը, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Արարատի Հակոբյանը, պայմանագրային զինծառայող, շարքային Էդգար Վարդանի Հարությունյանը: [78]

Ըստ ՀՀ զինվորական դատախազությանտվյալների՝ փաստի առթիվ 17.10.2013 թ-ին ՀՀ Քրեական օրենսգրքի373-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Նախաքննությունը շարունակվում է:

---

[77] http://www.1in.am/arm/armenia_society_202624.html
[78] http://www.mil.am/1381988836